

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

№ 1(44)
2026

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի
Журнал «Вестник Ереванского университета. Правоведение» выходит два раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"
Two issues of "Journal of Yerevan University. Jurisprudence" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

Խմբագրական խորհուրդ.
Редакционная коллегия:
Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Դանիելյան Գևորգ (ի.գ.դ., պրոֆ.,
gdanielyan@ysu.am)

Даниелян Геворг (д.юр.н., проф.)

Danielyan Gevorg (Sc. D. in Legal Sciences,
Prof.)

Անտոնյան Յուրի (Մոսկվա, ի.գ.դ.,
պրոֆ., antonyaa@yandex.ru)

Антонян Юрий (Москва, д.юр.н., проф.)

Antonyan Yuri (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Ավագյան Սուրեն (Մոսկվա, ի.գ.դ.,
պրոֆ., avakian@law.msu.ru)

Авакян Сурен (Москва, д.юр.н., проф.)

Avagyan Suren (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Գևորգյան Կարեն (ի.գ.թ.,
k.gevorgyan@ysu.am)

Геворкян Карен (к.юр.н.)

Gevorgyan Karen (PhD in Legal Sciences)

Դյուրան Բեռնարդ (Մոնպելյե, ի.գ.դ.,
պրոֆ., pas2k@orange.fr)

Дюран Бернард (Монпелье, д.юр.н.,
проф.)

Duran Bernard (Montpellier, Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Խաբրիևա Տալիա (Մոսկվա, ի.գ.դ.,
պրոֆ., ՌԴ ԳԱ ակադեմիկոս,
office@izak.ru)

Хабриева Талия (Москва, д.юр.н., проф.,
академик РАН)

Khabrieva Talia (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Prof., Academician of RAS)

Կուրի Հելմուտ (Ֆրայբուրգ, ի.գ.դ.,
պրոֆ., helmut.kury@web.de)

Курь Хельмут (Фрайбург, д.юр.н., проф.)

Kury Helmut (Freiburg, Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Հարությունյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ.,
ggharut@yahoo.com)

Арутюнян Гагик (д.юр.н., проф.)

Harutyunyan Gagik (Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Հովհաննիսյան Վահե (ի.գ.դ., պրոֆ.,
vahhovhannisyanyan@ysu.am)

Оганнисян Ваге (д.юр.н., проф.)

Hovhannisyanyan Vahé (Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Ղազիկյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ., ՀՀ
ԳԱԱ ակադեմիկոս, gghazinyan@ysu.am)

Казинян Гагик (д.юр.н., проф., академик
НАН РА)

Ghazinyan Gagik (Sc. D. in Legal Sciences,
Prof., Academician of NAS RA)

Մարգարյան Աննա (ի.գ.դ., պրոֆ.,
annamargaryan@ysu.am)

Маргарян Анна (д.юр.н., проф.)

Margaryan Anna (Sc. D. in Legal Sciences,
Associate Prof.)

Չուչա Սերգեյ (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.,
chuchaigpan@gmail.com)

Чуча Сергей (Москва, д.юр.н., проф.)

Chucha Sergey (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Prof.)

Ուայթսել Աննա Մարի (ԱՄՆ, Ջորջ-
թաունի համալսարան, ի.գ.դ., պրոֆե-
սոր, aw813@georgetown.edu)

Уайтселл Энн Мари (США, Джордж-
таунский университет, д.юр.н., проф.)

Whitesell Anne Marie (USA, Georgetown
University, Sc. D. in Legal Sciences, Prof.)

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՔԱՂԱՔԱՅԻՄՎԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ГРАЖДАНСКОЕ СУДОПРОИЗВОДСТВО
CIVIL PROCEDURE

Վահե Հովհաննիսյան, Անահիտ Անտոնյան – Իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների կիրառումը դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում..... 6
Vahe Oganessian, Anahit Antonyan – Применение промежуточных мер защиты прав в процессе о повороте исполнения решения суда
Vahe Hovhannisyanyan, Anahit Antonyan – Application of Interim Measures of Protection of Rights in Proceedings for Reversal of Execution of a Judicial Act

Արթուր Ղաևրարյան, Տիգրան Մարկոսյան – Քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին դատախազի ու քննիչի որոշումների պրեկլյուզիվ և կոնկլյուզիվ ազդեցությունը քրեական և քաղաքացիական դատավարություններում 23
Artur Ghambaryan, Tigran Markosyan – Преклюзивное и конклюдентное воздействие решений прокурора и следователя о прекращении уголовного преследования и прекращении уголовного производства в уголовном и гражданском судопроизводстве
Artur Ghambaryan, Tigran Markosyan – The Preclusive and Conclusive Effects of Prosecutor’s and Investigator’s Decisions on Termination of Criminal Prosecution and Dismissal of Criminal Proceedings in Criminal and Civil Procedures

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ
ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА
THEORY AND HISTORY OF STATE AND LAW

Սերգեյ Քոչարյան – Իրավաստեղծագործական տեխնիկան իրավաբանական տեխնիկայի համատեքստում 42
Sergey Kocharyan – Правотворческая техника в контексте юридической техники
Sergey Kocharyan – Law-Making Technique in the Context of Legal Technique

Մելինե Սահրադյան – Չոն Ռոլաի «արդարությունը որպես անաչառություն» տեսությունը իրավաստեղծագործության առանցք..... 52
Meline Sahradyan – Теория Джона Ролза о «Справедливость как беспристрастность» как основа правотворчества
Meline Sahradyan – John Rawls’s Theory of “Justice as Fairness” as the Foundation of Lawmaking

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ
МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО
INTERNATIONAL LAW

- Ստեփան Քարտաշյան* – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը և դրանց կատարման առանձնահատկությունները (ռուս.)..... 67
- Степан Карташян* – Юридическая природа постановлений Европейского суда по правам человека и особенности их исполнения
- Stepan Kartashyan* – Legal Nature of Judgments of the European Court of Human Rights and Specifics of Their Implementation (in Rus.)

ՔՐԵԱՎԱՆ ԴԱՏԱՎԱԸՈՒԹՅՈՒՆ
УГОЛОВНОЕ СУДОПРОИЗВОДСТВО
CRIMINAL PROCEEDINGS

- Կարեն Ամիրյան* – Հանցագործության բացահայտման նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման խնդիրը ՀՀ քրեական դատավարությունում..... 82
- Карен Амირян* – Проблема использования результатов оперативно-разведывательной деятельности, проводимой в целях выявления преступлений в уголовном процессе РА
- Karen Amiryan* – The Problem of Using the Results of Operational-Intelligent Activities Carried Out for the Purpose of Detecting Crime in the Criminal Judiciary of the RA

ՔԱՂԱՔԱՑԻԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ГРАЖДАНСКОЕ ПРАВО
CIVIL LAW

- Տաթևիկ Դավթյան* – Արհեստական բանականությունը ռազմական ներքուստ՝ մահաբեր ինքնավար զենքային համակարգերի սահմանումից դուրս. հասկացությունների հստակեցում և գործառնության շրջանակ (անգլ.)..... 87
- Tatevik Davtyan* – Искусственный интеллект в военной сфере за пределами летальных автономных систем вооружений: концептуальные уточнения и функциональная рамка (англ.)
- Tatevik Davtyan* – Artificial Intelligence in the Military Beyond Laws: Conceptual Clarifications and a Functional Approach

Նարինե Ավագյան – Հողամասի և դրա վրա գտնվող շենքերի, շինությունների՝ որպես քաղաքացիաիրավական ինքնուրույն օբյեկտ դասակարգելու իրավական հետևանքները. համեմատական վերլուծություն և բարեփոխման տեսլական..... 111

Нарине Авагян – Правовые последствия квалификации земельного участка и расположенных на нем зданий и сооружений как самостоятельных объектов гражданского права: сравнительный анализ и концепция реформа

Narine Avagyan – Legal Consequences of Classifying Land Plots and Attached Buildings and Structures as Independent Civil-Law Objects: A Comparative Analysis and Reform Perspective

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՇՐՋԱՊԱՐԴԻ
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ^{ID}, ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ^{ID}
Երևանի պետական համալսարան

Հոդվածում համակողմանիորեն ուսումնասիրվել է դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի ընթացքում իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների կիրառման անհրաժեշտությունը: Հիմնավորվել է, որ դատական ակտի կատարման շրջադարձի հարցի լուծումը դատարանն ապահովում է ոչ թե մասնավոր տվյալ դեպքում կողմերից մեկի, այլ հանրային շահի հիման վրա, առ այն, որ դատարանն է պարտավոր ապահովել անձի՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված հիմնական իրավունքների իրացման համար նախատեսված կառուցակարգերի պատշաճ կենսագործումը: Ըստ այդմ՝ հեղինակները եզրահանգել են, որ դատարանը, դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի առանձնահատկություններից ելնելով և ունենալով պարտականություն՝ ապահովել անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրացումը, ոչ միայն պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կատարել դատական ակտի շրջադարձ, այլև ապահովել իր իսկ դատական ակտի կատարումը: Հեղինակները հիմնավորել են, որ դատական ակտի կատարումն ապահովելու նկատառումից ելնելով՝ վճռի կատարման շրջադարձի իրականացման վարույթի շրջանակում դատարանի կողմից նախապես պետք է կիրառվեն իրավունքի պաշտպանության

Վահե Հովհաննիսյան – իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ

Vahe Oganesyan – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского процесса ЕГУ

Vahe Hovhannisyann – Doctor of Law, Professor, Head of YSU Chair of Civil Procedure

Էլ. փոստ՝ vahehovhannisyann@ysu.am ORCID ID: <https://orcid.org/0000-0001-9839-0374>

**** Անահիտ Անտոնյան** – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

Анаит Антонян – Судья суда общей юрисдикции первой инстанции Котайкской области РА, аспирант кафедры гражданского процессуального права юридического факультета Ереванского государственного университета

Anahit Antonyan – PhD student at YSU Chair of the Civil Procedure, Judge of the general jurisdiction court of first instance of Kotayk Region of the RA

Էլ. փոստ a.antonyan@court.am ORCID ID: <https://orcid.org/0009-0000-2322-1269>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 06.02.2026

Գրախոսվել է՝ 23.02.2026

Հաստատվել է՝ 02.06.2026

© The Author(s) 2026

այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են վարույթի վերջնական նպատակին հասնելու համար:

Հոդվածում մանրամասն վերլուծվել են իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցները, դրանց կիրառման դեպքերը և նախաձեռնող սուբյեկտները՝ համեմատական անցկացնելով նաև հայցի ապահովման միջոցների հետ: Վերլուծության է ենթարկվել նաև վճռի կատարման ապահովման ինստիտուտը քննարկվող վարույթի շրջանակում: Իրավակիրառ պրակտիկայի, օրենսդրական կարգավորումների և կատարած վերլուծությունների լույսի ներքո հեղինակներն առաջարկել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսել կարգավորումներ, որոնք վերաբերում են վճռի կատարման շրջադարձի վարույթում իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցներին և դրանց կիրառմանը:

Բանալի բառեր – *դատական պաշտպանության իրավունք, արդար դատաքննության իրավունք, արդար դատաքննության իրավունքի տարր, դատական ակտի կատարում, դատական ակտի կատարման շրջադարձ, վճռի կատարման շրջադարձ, իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցներ, վճռի կատարման ապահովում*

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ժամանակակից իրավունքակազմը, ընդգրկելով նաև դատական ակտի կատարում պահանջելու իրավունքը, անհնար է պատկերացնել առանց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերջնարդյունքների և վերջնանպատակների համապարփակ ապահովման գաղափարի, որպիսին ենթակա է իրացման նաև քաղաքացիադատավարական արդյունավետ կառուցակարգերի միջոցով: Վճռի կատարման շրջադարձի վարույթը քաղաքացիական դատավարության տարբերակված ձև է, որի արդյունքում կայացված եզրափակիչ դատական ակտով վերականգնվում է նախքան բեկանված դատական ակտի կայացումը եղած վիճակը՝ ապահովելով շահագրգիռ անձի իրավունքի պաշտպանությունը և վերացնելով արդարադատության էությունը խախտող իրավիճակը: Վճռի կատարման շրջադարձի վարույթի շրջանակում չեղարկվում է սխալ, բեկանված դատական ակտի հիման վրա ծագած իրավունքը՝ դրանով իսկ լիարժեքորեն ապահովելով արդարադատության իրականացման գործառույթը: Հարկ է ընդգծել, որ բեկանված ակտի հիման վրա առաջացած իրավունքը ի սկզբանե պետք է գոյություն չունենար, ուստի նոր դատական ակտ կայացնող դատարանը հայցի մերժման կամ վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու որոշում կայացնելու դեպքում պարտավոր է ապահովել նաև անձի իրավունքի վերականգնումը: Հակառակ դեպքում իրավունքի պաշտպանությունը, բողոքարկման հիման վրա նոր ակտի կայացումը կկրեն ձևական բնույթ և չեն հանգեցնի քաղաքացիական դատավարության կարգով գործի քննությամբ ակնկալվող վերջնարդյունքին:

Առավել պարզ բնութագրմամբ՝ վճռի շրջադարձի վարույթի նպատակը վճռի կատարման հետևանքի վերացումն է, որը դրսևորվում է գույքը վերա-

դարձնելով, պետական գրանցումն անվավեր ճանաչելով, անձի գույքային իրավունքը վերականգնելով և այլն: Հետևաբար, կարելի է արձանագրել, որ անձը, բողոքարկելով դատական ակտը և գործի նոր քննության փուլում իրացնելով իր իրավունքի պաշտպանությունը, նպատակ ունի ստանալու նոր դատական ակտ, որով ոչ միայն կմերժվի հայցվորի պահանջը, այլև կվերացվի կատարված, սակայն հետագայում բեկանված և այլևս կատարելիության հատկանիշ չունեցող դատական ակտի հիման վրա առաջացած բացասական հետևանքը: Գործի նոր քննությունը իմաստագուրկ կլինի, եթե չսպահովվեր վարույթի նպատակով պայմանավորված՝ անձի իրավունքի պաշտպանությունը:

Քանի որ պետության անունից արդար դատաքննության իրավունքի ապահովման պարտականության առաջնային կրողը դատարանն է, կարծում ենք, որ վճռի կատարման շրջադարձի հարցի քննարկումը պետք է կատարվի նաև դատարանի նախաձեռնությամբ՝ անկախ այն բանից՝ շահագրգիռ անձը նման դիմում ներկայացրել է, թե ոչ: Այս հարցին դատարանը պետք է անդրադառնա գործի նոր քննության փուլում հայցը լրիվ կամ մասնակի մերժելու, գործի վարույթը կարճելու կամ առանց քննության թողնելու մասին դատական ակտում՝ հաշվի առնելով, որ արդարադատության գլխավոր նպատակը մարդու իրավունքների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունն է, որը օրենքի ֆորմալ իրացման պարագայում կարող է չիրականանալ: Նման դիրքորոշումը պայմանավորված է դատարանի՝ որպես հանրային իշխանությունը կրող սուբյեկտի կարգավիճակով: Մասնավորապես.

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելն ու պաշտպանելը հանրային իշխանության պարտականություններն են:

Նշված սահմանադրական նորմը սահմանում է պետության պարտականությունները հիմնական իրավունքների ու ազատությունների առնչությամբ՝ նախատեսելով այդ պարտականությունների երկու դրսևորում: Նախ՝ հանրային իշխանությունը պարտավոր է մի կողմից «հարգել», իսկ մյուս կողմից՝ «պաշտպանել» հիմնական իրավունքներն ու ազատությունները: «Հարգելը» պետության պասիվ վարքագիծն է՝ հիմնական իրավունքով պաշտպանված բարիքին միջամտելուց ձեռնպահ մնալու եղանակով: Ի տարբերություն դրա՝ հիմնական իրավունքները «պաշտպանելը» պետության վրա դնում է պոզիտիվ գործողություններ ձեռնարկելու պարտականություն՝ ի շահ հիմնական իրավունքի կրողների (ֆիզիկական և իրավաբանական անձանց): Դրանով ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է հիմնական իրավունքներից բխող՝ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտականությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշմամբ՝ պետության պոզիտիվ պարտականությունների հիմնական հատկանիշն այն է, որ դրանք գործնականում պահանջում են հանրային իշխանություններից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտպանելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, մինչդեռ նեգատիվ պարտականությունները պահանջում են

ձեռնպահ մնալ անհարկի միջամտությունից: Ըստ այդմ՝ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտականությունների նպատակը ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխավորումն է պետության՝ մի դեպքում ակտիվ, մյուս դեպքում՝ պասիվ դերակատարության միջոցով¹:

Իր հերթին, պոզիտիվ պարտականության պատշաճ կատարումը ներառում է նյութական և ընթացակարգային բաղադրիչների առկայություն, որպիսի տարբերակման հիմքում ընկած չափանիշը պետության կողմից ակնկալվող գործողության էությունն է: Նյութական բաղադրիչը ենթադրում է հիմնական իրավունքների և ազատությունների լիարժեք ու արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրում, իսկ ընթացակարգային բաղադրիչը պահանջում է հանրային իշխանության մարմինների կողմից այդ կառուցակարգերի և ընթացակարգերի պատշաճ կենսագործում: Օրենքով հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր երաշխավորելը սահմանադրաիրավական պահանջ է:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Քննարկվող դեպքում Սահմանադրությամբ հռչակված անձի արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների երաշխավորման, դրանց արդյունավետ իրականացման անհրաժեշտ կառուցակարգերը սահմանված են օրենքներով: Նման կարևոր ընթացակարգ է նաև դատական ակտի կատարման շրջադարձի ինստիտուտի նախատեսումը: *Հետևաբար՝ օրենսդրի կողմից նման ընթացակարգի նախատեսման դեպքում հանրային իշխանության կրող սուբյեկտները պետք է պատշաճորեն կենսագործեն նշյալ կառուցակարգը՝ ի ապահովումն այսպես կոչված «հանրային շահի», այն էլ սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրացնելու համար: Դատարանը նշված կառուցակարգի իրացումն ապահովող հանրային իշխանությունը կրող սուբյեկտ է:*

¹ Տե՛ս ՎԴ թիվ 2/0111/05/21 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 12.06.2025 թ. որոշումը:

Դատական ակտի կատարման շրջադարձի հարցի լուծումը դատարանն ապահովվում է առավելապես ոչ թե մասնավոր, տվյալ դեպքում՝ կողմերից մեկի շահի, այլ հանրային շահի հիման վրա, առ այն, որ դատարանն է պարտավոր ապահովել անձի Մահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված հիմնական իրավունքների իրացման համար նախատեսված կառուցակարգերի պաշտպան կենսագործումը:

Միաժամանակ, կարծում ենք, դատարանը, նման վարույթի առանձնահատկություններից ելնելով և ունենալով պարտականություն՝ ապահովել անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրացումը, ոչ միայն պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կատարել դատական ակտի շրջադարձ, այլև ապահովել իր իսկ դատական ակտի կատարումը: Նման դիրքորոշումը բխում է նաև Եվրոպական դատարանի հայտնած դիրքորոշումներից, որոնք հիմնականում հանգում են այն գաղափարին, որ դատական ակտի կատարումը պետք է դիտվի որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մաս:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել նախքան իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում²:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ Պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը³:

Եվրոպական դատարանը փաստել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պաշտպանում է վերջնական, պարտադիր դատական որոշումների կատարումը⁴: Ցանկացած դատարանի կողմից կայացված որոշումների կատար-

² Տե՛ս Պապամիխալոպոպուլոսն ընդդեմ Հունաստանի (*Papamichalopoulos v. Greece*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, կետ 34:

³ Տե՛ս *Colozza v. Italy* թիվ 9024/80 գանգատով Եվրոպական դատարանի 12.02.1985 թվականի վճիռը, կետ 28:

⁴ Տե՛ս *Ouzounis and others v. Greece* թիվ 49144/99 գանգատով Եվրոպական դատարանի 18.04.2002 թվականի վճիռը, կետ 21:

ման իրավունքը «դատարան դիմելու իրավունքի» բաղկացուցիչ մասն է, հակառակ պարագայում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կդառնա իմաստագուրկ⁵:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) 18.03.2016 թվականին ընդունած «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ»-ը, ի թիվս այլնի, Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում նաև իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է *res judicata* սկզբունքը: Այս սկզբունքի պահանջն է, ի թիվս այլնի, վերջնական դատական ակտերի կատարման ապահովումը: Դատական ակտը չկատարելու արդյունքում իմաստագրվում են դատական պաշտպանության իրավունքը և իրավունքի գերակայությունը⁶:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 09.09.2003 թվականի «Դատական ակտերի կատարման մասին» թիվ Rec(2003)17 հանձնարարականում ամրագրված է. «Մասնակից պետություններն ունեն պարտականություն՝ երաշխավորելու վերջնական և պարտադիր դատական ակտերի կատարումը»:

Վերոգրյալի հիման վրա համարում ենք, որ դատարանը նոր քննություն իրականացնելիս կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա դատական ակտի կատարման շրջադարձի վարույթ իրականացնելիս պարտավոր է միջոցներ ձեռնարկել իր վարույթի շրջանակում կայացվելիք դատական ակտի կատարումն ապահովելու համար:

Ընդ որում՝ գործ ունենք այնպիսի վարույթի հետ, որտեղ մի կողմը, մասնավորապես՝ հայցվորը, շահագրգռված չէ նախկին վիճակի վերականգնմամբ և կարող է խոչընդոտներ ստեղծել: Խոչընդոտները կարող են ստեղծվել, օրինակ, վճռի անմիջական հետևանքը վերացնելով և նոր իրավահարաբերություն ստեղծելով:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ դիրքորոշում է հայտնել առ այն, որ վճռի կատարման շրջադարձի հարցի քննարկման ժամանակ կարող է վերացվել միայն գոյություն չունեցող դատական ակտի անմիջական հետևանքը: Մասնավորապես, նշված գործով վճռի կատարման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ ծագել էր հայցվորի իրավունքը, ով հետագայում գույքը օտարել էր այլ անձի: Վճռաբեկ դատարանը որոշմամբ նշել է. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթի նպատակը մինչև բեկանված դատական ակտի կատարումը եղած դրությունը

⁵ St' u Burdov v. Russia թիվ 59498/00 գանգատով Եվրոպական դատարանի 070502002 թվականի վճիռը, կետ 34, 37:

⁶ St' u Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի 18.03.2016 թվականին ընդունած «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ», կետ 107:

վերականգնելն է: Այսինքն՝ բոլոր դեպքերում խոսքը բեկանված դատական ակտով որոշված, սահմանված և տրամադրված իրավունքների և պարտականությունների մասին է, որոնք վերացվել են դատական ակտի բեկանմամբ: Հետևաբար՝ վճռի շրջադարձի դիմումի քննության բովանդակությունը պետք է սահմանափակվի բեկանված դատական ակտի ծավալով (...): Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացիական իրավունքներ են ծագել ոչ թե բեկանված դատական ակտի, այլ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ հիմքերով (օր.՝ գործարք), ապա քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը ենթակա է իրականացման քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (...): (...)

Վճռաբեկ դատարանի կարծիքով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելիս դրա գործողության տիրույթում պետք է լինի բացառապես այն իրավունքների չեղարկումը, որոնք սահմանվել են բեկանված վճռով (դատական ակտով: Մինչդեռ դատարանները բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի կիրառման հարցը լուծել են բողոքաբերներին վճռի շրջադարձի դիմումի քննության մասնակից դարձնելու դատավարական գործողությամբ այն դեպքում, երբ վերջիններս չունեն այնպիսի դատավարական կարգավիճակ, որը թույլ կտար իրականացնել իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանություն, այդ թվում՝ գործարքի անվավերության դեպքում ռեստիտուցիայի կիրառում և վնասների հատուցում: Տվյալ դեպքում բողոք բերող անձանց իրավունքները ծագել են օրենքով սահմանված կարգով կնքված գործարքների հիման վրա, և այդ գործարքները քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չեն վիճարկվել որպես վիճահարույց կամ պահանջ չի ներկայացվել առոչինչ գործարքի հետևանքներ կիրառելու վերաբերյալ»:

Վերոգրյալից բխում է, որ որպես կանոն առաջանում է դատական ակտի կատարման շրջադարձի վերաբերյալ կայացված դատական ակտի հետագա կատարումն ապահովելու խնդիր: **Հետևաբար՝ դատարանի կողմից նախապես պետք է կիրառվեն իրավունքի պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են վարույթի վերջնական նպատակին հասնելու համար:**

Նման միջոցները դատավարագիտության մեջ հայտնի են որպես իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցներ (**provisional measures of protection**): Այդ միջոցների կիրառումը տարածված է նաև Եվրոպական դատարանի պրակտիկայում:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում որպես իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց հարկ է առանձնացնել հայցի ապահովման նախնական միջոց և հայցի ապահովման միջոց կիրառելու ընթացակարգերի նախատեսումը: Ընդ որում՝ երկու դեպքում էլ օրենքը սահմանում է նման միջոցների կիրառման հիմքերը:

Դատավարագիտության մեջ հայցի ապահովումը դիտարկվում է որպես դատարանի կողմից կատարվող դատավարական գործողություն, որը հետապնդում է գործով կայացվելիք վճռի կատարման երաշխիքներ ապահովելու նպատակ: Միննույն ժամանակ, հայցի ապահովումը դատական պաշտպանության դիմած անձանց իրավունքների պաշտպանության նախնական ձև է, քանի որ դատարանի որոշմամբ կիրառվող պաշտպանական միջոցները, որոնք դատավարագիտության մեջ կոչվում են հայցի ապահովման միջոցներ, հանդես են գալիս որպես վիճելի իրավահարաբերության կամ դրա հետ սերտորեն կապված այլ իրավահարաբերությունների մասնակիցների վրա նյութաիրավական ներգործության այնպիսի ժամանակավոր միջոցներ, որոնք չէզոքացնում են վիճելի իրավիճակը մինչև դրանում լիարժեք իրավական որոշակիության հաստատումը, բացառում են գործին մասնակցող անձի ենթադրյալ իրավունքներին անդառնալի (անվերականգնելի) վնաս պատճառելու հավանականությունը⁷:

Ստացվում է՝ հայցի ապահովման ինստիտուտը հանդես է գալիս որպես օրենսդրությամբ նախատեսված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք, որով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ: Այլ խոսքերով՝ հայցի ապահովման միջոցի կիրառումը միտված է հայցվորի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը և բացասական հետևանքներ է առաջացնում, որպես կանոն, պատասխանողի համար:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը⁸:

⁷ Տե՛ս **Մեղրյան Ս.** Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 5-6:

⁸ Տե՛ս ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3511/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը:

2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած Քաղաքացիական դատավարության օրենսգրքում հստակ սահմանվեց, որ հայցի ապահովման միջոց կիրառվում է, եթե դրա չկիրառումը. ա) կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, բ) հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ գ) էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Նշված կետերով հստակեցվել են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը, որոնք, ի թիվս դրա վերաբերյալ հիմնավորումների, պետք է նշվեն նման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության մեջ:

Խնդիրն այն է, որ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում չկա հայց, չկան դասական կողմեր՝ հայցվոր և պատասխանող: Վարույթի հիմնական մասնակիցը շահագրգիռ անձն է, ով շրջադարձի կատարման դիմում է ներկայացնում: Դիմումի քննության մասին տեղեկացվում են նաև հիմնական գործով հայցվորը՝ պահանջատերը, և պատասխանողը՝ պարտապանը: Ստացվում է՝ այս դեպքում չենք կարող կիրառել դասական հայցի ապահովման ինստիտուտը:

Կարծում ենք, որ դատական ակտի շրջադարձի վարույթի շրջանակում ավելի քան առկա է իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցի կիրառման անհրաժեշտություն: Ընդ որում՝ այս վարույթի ընթացքում կիրառվող միջոցները ևս միտված են դատական ակտի կատարման ապահովմանը, գույքի փաստացի կամ իրավական վիճակի պահպանմանը, ինչպես նաև դիմողի իրավունքի պաշտպանությանը: Մասնավորապես՝ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի ընթացքում պարտապանը կարող է օտարել կամ վնասել գույքը՝ դրանով իսկ դժվարացնելով դատական ակտի կատարումը կամ էական վնաս հասցնելով դիմողին: **Հետևաբար՝ այս վարույթի շրջանակում իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց կիրառելու հիմքերը նույնական պետք է լինեն հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերին:**

Համադրելով հայցի ապահովման ինստիտուտի հետ՝ հարկ է նշել, որ ելնելով մրցակցային դատավարության սկզբունքից՝ հայցի ապահովման միջոցը կիրառվում է բացառապես գործին մասնակցող անձի միջնորդությամբ:

Որպես կանոն՝ իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցները ևս միտված են հենց մասնավոր շահի պաշտպանությանը, քանի որ գործին մասնակցող անձանցից մեկը ապահովագրվում է հնարավոր բացասական հետևանքների առաջացումից, իսկ մյուսի համար առաջանում են բացասական հետևանքներ: Սակայն պետք է կրկին ընդգծել, որ պետությունը, ի դեմս դատարանի, ունի արդար դատաքննության մասը կազմող՝ դատական ակտի արդյունավետ կատարման ապահովման պարտականություն:

Անհրաժեշտ է վերախմբավորել հայցի ապահովման ինստիտուտի կիրառման նպատակը՝ այն դիտարկելով որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված նյութական իրավահարաբերությունների լիար-

Ժեք իրացման և հնարավոր վնասները ողջամտորեն բացառող դատավարական կառուցակարգ, որպիսին երաշխավորելու պարտականությունը և պատասխանատվությունը կրում է պետությունը⁹: Հայցի ապահովման ինստիտուտի կիրառման ժամանակ չի կարելի անտեսել պետության պատասխանատվությունը դատական ակտի արդյունավետ կատարումը չապահովելու համար, ուստի անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսել հնարավորություն, որ դատարանը ևս սեփական նախաձեռնությամբ իրավունք ունենա կիրառելու հայցի ապահովման միջոց:

Դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի շրջանակում պնդելով այն տեսակետը, որ գործի նոր քննություն իրականացնող դատարանը պարտավոր է իր նախաձեռնությամբ քննարկել դատական ակտի շրջադարձի հարցը, հաշվի առնելով նաև վերը շարադրված տեսակետը, ընդգծելով, որ դատական ակտի կատարումն ապահովելու նպատակը ունի ոչ միայն մասնավոր, այլև հանրային նշանակություն՝ համարում ենք, որ դատարանը պետք է իրավունք ունենա իր նախաձեռնությամբ պաշտպանության միջանկյալ միջոց կիրառելու իրավունք: Մակայն այս լիազորության իրականացումը պետք է բացառապես ուղղված լինի դատարանի բուն գործառնություն՝ արարադատության իրականացմանը: Դատարանը պարտավոր է գործել ըստ օրենքի պահանջների՝ առաջնորդվելով մրցակցության և իրավահավասարության սկզբունքներով: Այս համատեքստում, **կարծում ենք, դատարանը միջանկյալ միջոց կիրառելու իրավունք պետք է ունենա բացառապես այն դեպքում, երբ վարույթի ընթացքում ողջամտորեն ենթադրելի է, որ նման միջոց չկիրառելը կարող է հանգեցնել դատական ակտի չկատարման կամ դժվարացնել կատարումը:**

Իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների մյուս նպատակների իրացման համար կարող է միջնորդություն ներկայացնել դատական ակտի շրջադարձի հարցում շահագրգռվածություն ունեցող անձը: Ընդ որում, կարծում ենք, շահագրգռվածություն ունեն ոչ միայն դիմողը, այլև գործին մասնակցող այլ անձինք, որոնք թեև դիմում չեն ներկայացրել, սակայն կատարված և հետագայում բեկանված դատական ակտը առնչվում է նրանց իրավունքին կամ օրինական շահին:

Բացի այդ, անհրաժեշտ է օրենքով ամրագրել, որ կիրառված միջանկյալ միջոցը պետք է պահպանվի մինչև դատական ակտի կատարումը, եթե դատարանը որոշել է կատարել դատական ակտի շրջադարձ, և մինչև օրինական ուժի մեջ մտնելը, եթե դատարանը մերժել է դատական ակտի կատարման շրջադարձի իրականացումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է արձանագրել, որ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում իրավունքի պաշտպանության միջանկյալ

⁹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.** Հայցի ապահովման քաղաքացիադատավարական կառուցակարգի սուբյեկտային շրջանակը որոշելու հիմնախնդիրները ՀՀ-ում // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2022, № 1, էջ 47-60:

միջոցները դատարանի նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող շահագրգիռ անձի միջնորդությամբ կարող են կիրառվել, եթե դրա չկիրառումը, ա) կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, բ) հանգեցնել այն գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության, որը դատական ակտի շրջադարձի արդյունքում պետք է վերադարձվի նախկին իրավատիրոջը կամ գ) էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Ընդ որում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ակտի կատարման շրջադարձի վերաբերյալ առանձին վարույթ սահմանող գլուխ նախատեսելիս պետք է նախատեսվեն նաև վարույթի շրջանակում իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների կիրառմանը վերաբերող դրույթներ:

Քննարկելով իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց կիրառելու հիմքերը՝ հարկ է անդրադառնալ նաև իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների տեսակներին՝ դրանք համադրելով հայցի ապահովման միջոցների հետ:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայցի ապահովման միջոցներն են՝

1) պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը.

2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը.

3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը.

4) պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը.

5) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը.

6) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը.

7) օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:

2. Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց»:

Հարկ է քննարկել վերը նշված միջոցներից յուրաքանչյուրի կիրառման հնարավորությունը դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում:

Դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում չկա հայցագին, և, հետևաբար, այս վարույթում կիրառելի չի կարող լինել պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը՝ որպես իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց:

Դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում չկա դասական իմաստով վեճ, և չի կարող լինել վեճի առարկա, ինչպես նաև այս վարույթում չի

քննարկվում գույքն արգելանքից հանելու պահանջ, հետևաբար կիրառելի չեն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով սահմանված միջոցները:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով որպես հայցի ապահովման միջոց սահմանվել է պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը: Խնդիրն այն է, որ այս միջոցը, նույնիսկ որպես հայցի ապահովման միջոց, գրեթե չի կիրառվում դատական պրակտիկայում: Դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում դատարանը դեռևս պետք է քննարկման առարկա դարձնի գույքի՝ հայցվորին՝ տվյալ դեպքում դիմողին պատկանելու հարցը, հետագայում նոր որոշի՝ արդյո՞ք պետք է իրականացվի դատական ակտի կատարման շրջադարձ: Հետևաբար, կարծում ենք, այս միջոցը կիրառելի չէ, ավելին՝ դատական պրակտիկայում ևս որպես հայցի ապահովման միջոց կիրառվում է ոչ թե արգելանքի հայցի ապահովման միջոցը, այլ արգելադրումներ հայցի ապահովման միջոցը (վեճի առարկայի վերաբերյալ որոշակի գործողությունների կատարումն արգելելը կամ վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը):

Արդեն իսկ նշվեց, որ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի արդյունքում կարող է վերացվել բեկանված և կատարված դատական ակտի միայն անմիջական հետևանքը, օրինակ՝ վերադարձվի գույքը, անվավեր ճանաչվի կատարված իրավունքի գրանցումը և այլն: Հետևաբար՝ իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցները պետք է ուղղված լինեն բեկանված և կատարված դատական ակտի անմիջական հետևանքի պահպանմանը, քանի՞ դեռ դատական ակտի շրջադարձի վերաբերյալ դատական ակտով չի որոշվել այն վերացվում է, թե ոչ: Օրինակ՝ դատական ակտի շրջադարձի կատարման արդյունքում գույքի վերադարձի հարց առկա լինելու դեպքում կարող է արգելվել, որ վերադարձման ենթակա գույքի վերաբերյալ կնքվի որևէ գործարք: Մեկ այլ օրինակ՝ կարող է արգելվել, որ իրավասու մարմինը կատարի այլ անձանց իրավունքների գրանցում: Կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ, վերադարձման ենթակա գույքը կենդանիներ են, և անձը, որի մոտ գտնվում են դրանք, դրսևորում է անտարբերություն և չի կերակրում կենդանիներին՝ դրանով իսկ խոչընդոտելով դատական ակտի կատարումը և էական վնաս հասցնելով շահագրգիռ անձին: Նման դեպքերում պետք է պարտավորեցնել պահանջատիրոջը կատարել որոշակի գործողություններ, մասնավորապես՝ կերակրել կենդանիներին: Հետևաբար, կարծում ենք, դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում կիրառելի են պահանջատիրոջը (բեկանված գործով հայցվորին) և երրորդ անձանց որոշակի գործողություններ կատարելն արգելելու և որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելու իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցները:

Կարծում ենք, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի վերաբերյալ իրավակարգավորումներում որպես այս վարույթին հատուկ իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցներ պետք է նախատեսվեն հետևյալ միջոցները.

1) պահանջատիրոջը (բեկանված գործով հայցվորին) կամ երրորդ անձանց որոշակի գործողություններ կատարելն արգելելը,

2) պահանջատիրոջը (բեկանված գործով հայցվորին) կամ երրորդ անձանց որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը:

Իհարկե, նման միջոցների կիրառումը բացառապես պետք է ուղղված լինի իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցներ կիրառելու օրենքով սահմանված հիմքերին:

Պաշտպանության միջանկյալ միջոցի կիրառմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է հիշատակել նաև դատական ակտի կատարմանն ուղղված այլ կառուցակարգի կիրառումը ևս, որը, կարծում ենք, գործունե կառուցակարգ կարող է լինել դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում կայացված եզրափակիչ դատական ակտի կատարման համար: Խնդիրն այն է, որ պաշտպանության միջանկյալ միջոց կիրառված չլինելու դեպքում, նույնիսկ եթե վարույթից առաջ կամ դրա ընթացքում պարտապանը չի դրսևորել անբարեխիղճ վարքագիծ, դատական ակտի կայացումից հետո ևս կարող է նման վարքագիծ դրսևորել՝ խոչընդոտելով դատական ակտի կատարումը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝

«1. Առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ վճռի կայացումից հետո մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը կիրառում է վճռի կատարման ապահովման միջոցներ:

2. Վճռի կատարման ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննվում է անհապաղ, առանց դատական նիստ հրավիրելու:

3. Վճռի կատարման ապահովման միջոցների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 13-րդ գլխի կանոնները»:

Նշված հոդվածից բխում է, որ կարգավորումը վերաբերում է ոչ թե բոլոր եզրափակիչ ակտերին, այլ միայն վճիռներին: Ընդ որում՝ դատարանը կարող է կիրառել վճռի կատարման ապահովման միջոց միայն կողմի միջնորդությամբ: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտ են դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները: Այսինքն՝ դատական ակտի շրջադարձի վարույթի արդյունքում կայացվում է որոշում և ոչ՝ վճիռ, ուստի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածի կարգավորումը չի տարածվում այս վարույթի վրա: Մինչդեռ, կարծում ենք, նման հնարավորությունը պետք է սահմանվեր նաև քաղաքացիական դատավարության տարբերակված վարույթների համար:

Ի տարբերություն իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների կիրառման՝ կարծում ենք, որ *դատական ակտի կայացումից հետո դատական ակտի կատարման ապահովման միջոցի կիրառումը պետք է իրականացվի բացառապես շահագրգիռ անձի միջնորդությամբ, քանի որ, եթե դատարանը գործի քննության ընթացքում իրեն հասանելի գործի նյութերի առկայության պայմաններում նման անհրաժեշտություն չի տեսել և սեփական նախաձեռնությամբ չի կիրառել իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց, դատական ակտի կայացումից հետո չի կարող ունենալ բավարար տեղեկատվություն դատական ակտի կատարման հետ կապված հնարավոր խոչընդոտների առաջացման մասին:*

Կարծում ենք, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա վճռի կատարման ապահովմանը վերաբերող կարգավորումը հարկ է ընդլայնել և նախատեսել կարգավորում, որը կվերաբերի բոլոր եզրափակիչ դատական ակտերի կատարման ապահովմանը: Նման պայմաններում այն կիրառելի կլինի նաև դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի նկատմամբ:

Դատական պրակտիկայում ևս առկա են օրինակներ, երբ իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց կիրառված չլինելու պայմաններում շահագրգիռ անձի համար առաջացել են բացասական հետևանքներ: Օրինակ՝ թիվ ԿԴ1/0244/02/17 քաղաքացիական գործով 27.03.2024 թվականին հրապարակվել է վճռի շրջադարձ կատարելու վերաբերյալ որոշում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի դիմումի հիման վրա: Որոշումը բողոքարկվել է և, քանի որ կիրառված չէր ո՛չ իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոց, ո՛չ եզրափակիչ դատական ակտի կատարումն ապահովող միջոց՝ դատարանի կողմից որոշման հրապարակումից հետո մինչև ուժի մեջ մտնելը՝ 18.04.2024 թ., գրանցող մարմնի կողմից կատարվել է ժառանգի իրավունքի գրանցում այն գույքի նկատմամբ, որը պետք է վերադարձվեր վճռի կատարման շրջադարձի դիմում ներկայացրած անձին:

Անվտանգությունը վերագրելով՝ հարկ ենք համարում ընդգծել, որ ներկայումս քննարկված կառուցակարգերը սահմանված չեն ո՛չ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ո՛չ էլ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում: Կարգավորման բացի պայմաններում դատական ակտի շրջադարձի վարույթը դառնում է առարկայագուրկ և ձևական, ավելին՝ նման կառուցակարգի բացակայությունը ընձեռում է դատավարական իրավունքների չարաշահման հնարավորություն, ինչի հետևանքով անձի դատական պաշտպանության իրավունքը, ըստ էության, դառնում է անիրացվելի: Նման իրավիճակները հանգեցնում են դատական նոր վարույթների ծագման հավանականության, իսկ նոր դատավարությունները ենթադրում են դատական ակտի կատարման շրջադարձով շահագրգռվածություն ունեցող անձի համար բացասական հետևանքների առաջացում՝ դատական ծախսեր, ժամանակի

կորուստ, հետաքրքրվածության կորուստ: Շատ ավելի մտահոգիչ է գիտակցելը, որ նման կառուցակարգ չնախատեսելը անձի մեջ ձևավորում է ողջամիտ ժամկետում իրավունքի պաշտպանություն ստանալու անհնարինության զգացում, ինչպես նաև դատական իշխանության նկատմամբ վստահության նվազում:

Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված կառուցակարգերը՝ նախատեսելով սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ իրացման գործիքներ, այդ թվում՝ իրավունքների պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման լիարժեքությանը:

ВАГЕ ОГАНЕСЯН, АНАИТ АНТОНЯН – Применение промежуточных мер защиты прав в процессе о повороте исполнения решения суда. – В рамках настоящей статьи авторами комплексно рассмотрена необходимость применения промежуточных мер защиты прав при производстве по делу о повороте исполнения судебного акта. В статье обосновывается, что суд обеспечивает разрешение вопроса о повороте исполнения судебного акта, исходя не из частного интереса одной из сторон в данном деле, а из публичного интереса, а именно, что суд обязан обеспечить надлежащую реализацию механизмов, предусмотренных для реализации основных прав человека, определенных в статьях 61 и 63 Конституции. На основании изложенного авторами сделан вывод о том, что суд, исходя из особенностей производства по делу о повороте исполнения судебного акта и имея обязанность обеспечить реализацию права лица на судебную защиту и справедливое судебное разбирательство, обязан не только по своей инициативе отменить судебный акт, но и обеспечить исполнение собственного судебного акта. Авторами обосновано, что для обеспечения исполнения судебного акта в рамках производства по делу о повороте исполнения судебного решения суд должен в первую очередь применить такие меры защиты права, которые необходимы для достижения конечной цели производства. В статье подробно анализируются обеспечительные меры защиты прав, случаи их применения и инициаторы, а также проводится их сравнение с мерами обеспечения иска. Также анализируется институт обеспечения исполнения судебного решения в рамках рассматриваемого производства. С учётом правоприменительной практики, законодательных норм и проведённого анализа авторами предлагается предусмотреть в Гражданском процессуальном кодексе нормы, касающиеся промежуточных мер защиты прав в производстве по оспариванию исполнения судебного решения и их применения.

Ключевые слова: право на судебную защиту, право на справедливое судебное разбирательство, элемент права на справедливое судебное разбирательство, исполнение судебного акта, поворот исполнения судебного акта, поворот исполнения решения суда, промежуточные меры защиты права, обеспечение исполнения решения суда

VANE HOVHANNISYAN, ANAHIT ANTONYAN – Application of Interim Measures of Protection of Rights in Proceedings for Reversal of Execution of a Judicial Act. – In the article, the authors comprehensively examined the need for the application of interim measures of protection of rights during the proceedings for the reversal of the execution of a judicial act. The article substantiates that the court ensures the resolution of the issue of reversal of the execution of a judicial act based not on the private interest of one of the parties in this case, but on the public interest, namely that the Court is obliged to ensure the proper implementation of the mechanisms

provided for the realization of the fundamental rights of a person defined in Articles 61 and 63 of the Constitution. Based on the above, the authors concluded that the court, based on the peculiarities of the proceedings for the reversal of the execution of a judicial act and having the duty to ensure the realization of the person's right to judicial protection and a fair trial, is not only obliged to reverse the judicial act on its own initiative, but also to ensure the execution of its own judicial act. The authors substantiated that, in order to ensure the execution of the judicial act, within the framework of the proceedings for the reversal of the execution of the judgment, the court should first apply such measures of protection of the right that are necessary to achieve the final goal of the proceedings.

The article analyzes in detail the interim measures of protection of rights, the cases of their application and the initiators, also comparing them with the measures of securing the claim. The institute of ensuring the execution of the judgment within the framework of the proceedings under discussion was also analyzed. In the light of legal practice, legislative regulations and the conducted analyses, the authors proposed to provide regulations in the Civil Procedure Code that relate to interim measures of protection of rights in the proceedings for the reversal of the execution of the judgment and their application.

Key words: *right to judicial protection, right to a fair trial, element of the right to a fair trial, execution of a judicial act, reversal of the execution of a judicial act, reversal of the execution of a judgment, interim measures of protection of the right, ensuring the execution of a judgment*

Գրականության ցանկ / References

- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք [«Datakan akteri harkadir katarman masin» HH orenq`]:
- Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը [Burdovn Θ nddem Rossii gorcov Mardu iravunk` neri evropakan datarani 07.05.2002 t` vakani v \check{c} ` iř Θ]:
- Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն` իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի 18.03.2016 թվականին ընդունած «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ»։ [Council of Europe-i «Žogovrdavarut`yun` iravunk` mijocov` evropakan hanjnajođovi 18.03.2016 t`vakani Θ nduna \check{c} ` «Iravunk`i gerakayut`yan hski \check{c} cank`]:
- Կոլոցցան ընդդեմ Իտալիայի` «Colozza v. Italy» թիվ 9024/80 գանգատով Եվրոպական դատարանի 12.02.1985 թվականի վճիռը [Koloccan Θ nddem Italiayi «Colozza v. Italy» t` iv 9024/80 gangatov Evropakan datarani 12.02.1985 t` vakani v \check{c} ` iř Θ]:
- ՀՀ Սահմանադրություն [HH Sahmanadrut`yun]:
- Հովհաննիսյան Վ. Հայցի ապահովման քաղաքացիադատավարական կառուցակարգի սուբյեկտային շրջանակը որոշելու հիմնախնդիրները ՀՀ-ում // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2022, № 1 [Hovhannisyan V. Hayci apahovman k` agak` aciadatavaran kaԼucakargi subyektayin řjanakԼ orořelu himnaxndirnerԼ HH-um // «Banber Yerevan State University-i. Iravagitut`yun», 2022, № 1]:
- Հովհաննիսյան Վ. Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2019, № 3 (30) [Hovhannisyan V. Subyektiv iravunk`neri yev orinakan řaher`i pařtranut`yan k` agak` aciadatavaran kaԼucakarger`i zargacman himnaxndirnerԼ Hayastani Hanrapetut`yunum // «Banber Yerevan State University-i. Iravagitut`yun», 2019, № 3 (30)]:
- Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռ [Hornsbin Θ nddem Hunastani gorcov Mardu iravunk` neri evropakan datarani 19.03.1997 t` vakani v \check{c} ` iř Θ]:

Մեդրյան Ս. Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում, Եր. , ԵՊՀ հրատ. , 2020 [Megryan S. Hayci apahovumə k' aġak' aciakan datavarut' yunum, Er., Yerevan State University hrat., 2020]:

Ուզունիսը և մյուսներն ընդդեմ Հունաստանի՝ «Ouzounis and others v. Greece» թիվ 49144/99 գանգատով Եվրոպական դատարանի 180402002 թվականի վճիռը, կետ 21 [Uzunisə yev myusnern ənddem Hunastani «Ouzounis and others v. Greece» t' iv 49144/99 gangatov Evropakan datarani 18.04.2002 t' vakani vč' iř ə, ket 21]:

Պապամիկալոպոպուլոսն ընդդեմ Հունաստանի՝ Papamichalopoulos v. Greece գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռ [Papamikalopulosn Բոնդդեմ Hunastani «Papamichalopoulos v. Greece» gorcov Mardu iravunk' neri evropakan datarani 31.10.1995 t' vakani vč' iř]:

Սահմանադրական դատարանի 28.06.2013 թվականի ՄԴՈ-1102 որոշում [Constitutional Court of Armenia-i 28.06.2013 t' vakani SDO-1102 orošum:



ՎԴ2/0111/05/21 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 12.06.2025 թվականի որոշումը VD2/0111/05/21 varčakan gorcov Court of Cassation of Armenia-i 12.06.2025 t' vakani orošumə]:

Վճռաբեկ դատարանի՝ թիվ 2-4247/2004 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշումը [Court of Cassation of Armenia-i t' iv 2-4247/2004 k' aġak' aciakan gorcov 04.10.2013 t' vakani orošumə]:

Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական 07.10.2022 թվականի որոշումը [Court of Cassation of Armenia-i t' iv EKD/0479/02/14 k' aġak' aciakan 07.10.2022 t' vakani orošumə]:

Քաղաքացիական դատավարության օրենսգիրք [K' aġak' aciakan datavarut' yan orengirk':

**ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՒՅԹԸ
ՎԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԱՏԱԽԱՁԻ ՈՒ ՔՆՆԻՉԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՊՐԵՎԼՅՈՒԶԻՎ ԵՎ ԿՈՆՎԼՅՈՒԶԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ 
Հայ-ռուսական համալսարան
ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Աշխատանքը նվիրված է մինչդասական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին դատախազի ու քննիչի որոշումների ներձյուղային և քաղաքացիական դատավարության շրջանակում միջ-ձյուղային ազդեցությունների, ինչպես նաև քրեական վարույթի նյութերի քաղաքացիական գործում որպես ապացույց օգտագործվելու հետ կապված հարցերի վերլուծությանը:

* **Արթուր Ղամբարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Իրավաբանական գործունեությունը ծավալվում է բազմաթիվ ոլորտներում, արտացոլվում հասարակական շատ երևույթներում, հետևաբար, դրա ընդգրկած բնագավառը բավականին ընդարձակ է, քանի որ արդի հասարակական իրողությունների պայմաններում կենսական իրադրությունների ճնշող մասը կարգավորվում է իրավունքով: Այդ գործունեության ընթացքում իրավաբանական տեխնիկան իրավաբանական սխալները կանխարգելելու և ուղղելու կարևորագույն միջոց է և հնարավորություն է տալիս բարձրացնելու իրավաբանական աշխատանքի որակը:

«Իրավաբանական տեխնիկա», «իրավաստեղծագործական տեխնիկա» և «օրենսդրական տեխնիկա» եզրույթների հասկացման հարցում գիտնականների տեսակետներում առկա է որոշակի շփոթ: Հետևաբար, խնդրո առարկա հիմնահարցը հանգում է այդ հասկացությունների իմաստավորմանը, այնուհետև՝ իրավաբանական տեխնիկայի գոյություն ունեցող տեսակների առանձնացմանը, ինչը հնարավորություն կտա հիմնավորելու իրավաստեղծագործական տեխնիկայի՝ որպես իրավաբանական տեխնիկայի առանձին տեսակի գոյությունը և դրա ենթատեսակների առանձնացումը:

Հեղինակների մի մասն իրավաբանական տեխնիկան բնորոշում է որպես ընդհանրապես իրավաբանական փաստաթղթեր պատրաստելու, կազմելու, ձևակերպելու, դրանք համակարգելու և հաշվառելու կանոնների, հնարքների, եղանակների ամբողջություն¹, իսկ ոմանք դրա տակ հասկանում են միայն

¹ St' u **Черданцев А. Ф.** Теория государства и права: Учебник для вузов. - М.: Юрайт-М, 2002, էջ 366, **Кругликов Л. Л., Спиридонова О. Е.** Юридические конструкции и символы в уголовном праве. СПб.: Изд. Р. Асланова «Юридический центр Пресс», 2005, էջ 7-8, **Соловьев О. Г.** Преступления в

նորմաստեղծ տեխնիկան, այսինքն՝ այն նույնացնում են իրավաստեղծագործական տեխնիկային², ինչը, մեր կարծիքով, խնդրահարույց է, քանի որ «իրավաբանական տեխնիկա» հասկացությունն իր ընդգրկման առարկայով ավելի լայն է և ներառում է ոչ միայն նորմատիվ, այլև բոլոր տեսակի իրավական ակտերի նախապատրաստման ու ընդունման գործընթացը, այն վերաբերում է ոչ միայն իրավաստեղծագործությանը, այլև համակարգման, մեկնաբանողական և իրավակիրառ գործունեությանը: Իրավաստեղծագործական տեխնիկան ուղղված է հասարակության համար պետքական օրենքների, ենթաօրենսդրական ակտերի ստեղծմանը:

Ինչ վերաբերվում է «օրենսդրական տեխնիկա» եզրույթին, ապա պետք է նշել, որ, ինչպես արդարացիորեն նկատում է Ն. Ա. Պյանովը, այն կարող է դիտարկվել ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստով: Օրենսդրական տեխնիկան լայն իմաստով նույնական է իրավաստեղծագործական տեխնիկային, քանի որ այս դեպքում «օրենք» հասկացությունը վերաբերում է ցանկացած նորմատիվ իրավական ակտի և նույնիսկ իրավունքի ցանկացած աղբյուրի³: Այսպիսին պետք է համարել մեր հայրենակից Վլադիմիր Նազարյանի՝ օրենսդրական տեխնիկայի բնորոշումը, որը, ըստ նրա, օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ իրենց ձևով և կառուցվածքով ավելի կատարյալ նախագծերի մշակման իրավաստեղծ գործունեությունը բնութագրող, տեսականորեն իմաստավորված և հիմնավորված կանոնների՝ եղանակների, մեթոդների ու հնարքների համակարգ է, որն ապահովում է նորմատիվ ակտերի դրույթների շարադրանքի լիակատար և ճշգրիտ համապատասխանությունը դրանց բովանդակությանը, կարգավորվող ոլորտի սպառիչ ընդգրկումը նորմատիվ ակտում, իրավական նյութերի պարզությունն ու մատչելիությունը⁴:

Ըստ Ն. Ա. Պյանովի՝ նեղ իմաստով օրենսդրական տեխնիկան կանոնների, գործիքների և հնարքների ամբողջություն է, որը կիրառվում է օրենքների, այլ ոչ թե պարզապես նորմատիվ իրավական ակտերի պատրաստման, մշակման և հրապարակման ժամանակ, հետևաբար, այս իմաստով օրենսդրական տեխնիկան պետք է դիտարկել որպես իրավաստեղծագործական տեխնիկայի տարատեսակ⁵: Ի. Վոզնյակը, կողմնակից լինելով օրենսդրական տեխնիկայի ըմբռնման նեղ մոտեցմանը, կարծում է, որ այն (ըստ նրա տերմինաբանության՝ օրենսդրական ակտերի մշակման տեխնիկան) իրավական համակարգը

сфере налогообложения (ст. 194, 198, 199 УК РФ): проблемы юридической техники и дифференциации ответственности: автореф. Дис. ...канд. юрид. наук. Казань, 2002, էջ 10:

² Տե՛ս և, օրինակ, **Алексеев С. С.** Общая теория права: учебник – 2-ое изд., – М.: Проспект, 2009, էջ 482, Теория государства и права: учеб. для вузов / под ред. М. М. Рассолова, В. О. Лучина, Б. С. Эбзеева. М.: Юнити-Дана, 2000, էջ 296:

³ Տե՛ս **Пьянов Н. А.** Теория государства и права: учеб. пособие. В 2 ч. Ч. 2. Теория права. – Иркутск: Изд-во Иркут. гос. ун-та, 2011, էջ 144:

⁴ Տե՛ս **Նազարյան Վ.** Օրենսդրական տեխնիկայի տարրական կանոնները, Եր., 1999, էջ 10:

⁵ Տե՛ս **Пьянов Н. А.** նշվ. աշխ., էջ 144:

ձևավորող կարևոր գործոններից մեկն է, որի կանոնները չպահպանելը հանգեցնում է ցածր որակի և ոչ արդյունավետ օրենքների ընդունման, ինչը չի կարող ապահովել իրավունքի գերակայությունը հասարակությունում, ուստի օրինաստեղծ սուբյեկտներն արդյունավետ օրենքներ ստեղծելու համար պետք է անընդհատ կատարելագործեն իրենց կողմից ընդունվող օրենսդրական ակտերի մշակման տեխնիկան⁶:

Ս. Բ. Վենգերովը իրավաբանական տեխնիկան համարում է օրենքների պատրաստման, ձևակերպման և հրապարակման հետ կապված կանոնների և հնարքների ամբողջություն⁷, ինչը նույնանում է նեղ իմաստով օրենսդրական տեխնիկայի ըմբռնմանը: Տվյալ դեպքում տեղին կլիներ «իրավաբանական տեխնիկայի» փոխարեն նա կիրառեր «օրենսդրական տեխնիկա» եզրույթը:

Ռ. Տ. Մուխանը նշում է, որ օրենսդրական տեխնիկան ուղղակիորեն կապված է օրինաստեղծագործության հետ, քանի որ այն համարվում է իրավաստեղծագործության մաս, դրա տեսակ: Օրինաստեղծագործության վերջնական արդյունք հանդիսացող օրենքը պետք է մարմնավորվի գործնականում: Հեղինակը փաստում է, որ օրինաստեղծ գործընթացի կարևոր մասն օրենքի ձևավորումն է, դրա բովանդակության առավելագույնս հակիրճ և ճշգրիտ ձևակերպումը, որտեղ կիրառվում է պատմականորեն ապացուցված այնպիսի գործիքակազմ, ինչպիսին է օրենսդրական տեխնիկան, որը հնարավորություն է տալիս մշակելու և ընդունելու օրենքի առավել արդյունավետ, երբեմն օպտիմալ տարբերակ⁸: Ռ. Տ. Մուխանը նկատում է, որ եթե խոսքը օրինաստեղծագործության մասին է, ապա «և ենթաօրենսդրական ակտեր» բառերը պետք է բացառվեն, քանի որ այսպիսի նորմաստեղծագործությունն ունի իր առանձնահատկությունները: Այս տեսանկյունից հեղինակն առաջարկում է «իրավաբանական տեխնիկա» տերմինը, որը, ըստ նրա, ոչ միայն օրենքների, այլև ընդհանրապես տարբեր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի պատրաստման, ձևավորման և հրապարակման ընթացքում կիրառվող կանոնների և հնարքների համակարգ է⁹, ինչը, մեր կարծիքով, եզրույթաբանական առումով ճիշտ չէ, քանի որ նույնանում է իրավաստեղծագործական տեխնիկայի հասկացությանը:

Այսպիսով, իրավաբանական տեխնիկա հասկացության տարատեսակ մոտեցումներից առավել ընդունելի է այն ըմբռնումը, որը ներառում է իրավաբանական գործունեության այլ ոլորտներ: Իրավաբանական տեխնիկան որոշա-

⁶ St' u **Vozniak I.** Legislative drafting technique as a factor of guaranteeing the rule of law, *Visegrad Journal on Human Rights*, № 3, 2025, էջ 94, DOI: <https://doi.org/10.61345/1339-7915.2025.3.15>:

⁷ St' u **Венгеров А. Б.** Теория государства и права: учеб. для юрид. вузов. – 4-е изд., стер. – Москва: Омега-Л, 2007, էջ 493:

⁸ St' u **Мухаев Р. Т.** Теория государства и права: Учебник. – М.: Юрист, 2006, էջ 361-362:

⁹ St' u նույն տեղը, էջ 363:

կի չափանիշներով ենթարկվում է դասակարգման, ինչի վերաբերյալ ևս տեսաբանների շրջանում չկա միակարծություն¹⁰:

Ընդհանրապես, պետք է նշել, որ իրավաբանական տեխնիկայի տեսագործնական հիմնահարցերի մշակման գործում մեծ ավանդ ունի պրոֆեսոր Ս. Վ. Կաշանինան, ով իրավաբանական տեխնիկան դիտարկեց ոչ միայն որպես ինքնուրույն գիտական ուղղություն իրավունքի տեսության մեջ, այլև որպես ամբողջական ուսումնական դասընթաց¹¹: Նրա ջանքերի շնորհիվ այսօր իրավագիտության մեջ իրավաբանական տեխնիկան համարվում է ոչ միայն միջոցների, հնարքների, կանոնների համակցություն, այլև գիտական իմացություն այն մասին, թե ինչպես կատարել իրավաբանական աշխատանք¹²: Մեր կարծիքով՝ Ս. Վ. Կաշանինան ճիշտ մոտեցում է ցուցաբերում նաև իրավաբանական տեխնիկայի տեսակների դասակարգմանը: Հեղինակը, իրավաբանական տեխնիկայի դասակարգման հիմնական չափանիշ ընտրելով իրավական կարգավորման կառուցակարգի փուլերը (իրավաստեղծագործություն, իրավունքի գործողություն, իրավունքի իրացում), համարում է, որ գործնականում դրանցից յուրաքանչյուրում իրականացվում են իրավաբանական գործողություններ, և, որպես կանոն, կազմվում են իրավական փաստաթղթեր: Սակայն երբեմն իրավական կարգավորման հիմնական փուլերն «աճում են» կամ լրացվում են օժանդակ կամ լրացուցիչ փուլերով, երբ հարկ է լինում կատարել նաև իրավաբանական այլ գործողություններ: Օրինակ՝ եթե հրապարակվել է նորմատիվ ակտ, անպայման պետք է հոգ տանել այն սպազբեղում մասին, ընդ որում, դա պետք է անել ոչ թե այն ժամանակ, երբ կցանկանաս, այլ պահպանելով հրապարակման և այլ կանոնների սահմանային ժամկետները, կամ երբ օրենսդրական ակտի ստեղծման գործընթացում պետք է կատարվի (կամ մինչև

¹⁰ St' u **Дуель В. М.** Юридические документы и юридическая техника // Проблемы теории государства и права: учебник / под ред. В.М. Сырых. М., 2008, էջ 386, **Карташов В. Н.** Юридическая техника, тактика, стратегия, технология (к вопросу о соотношении) / В кн.: Проблемы юридической техники. Т. 1. – Н. Новгород, 2000, էջ 18, **Соловьев О. Г., Санташов А. Л.** Дискуссионные вопросы определения видов юридической техники в теории права // Юридическая наука. 2013, № 4, էջ 37-38, <https://cyberleninka.ru/article/n/diskussionnye-voprosy-opredeleniya-vidov-yuridicheskoy-tehniki-v-teorii-prava/viewer> (մուտք՝ 22.01.2026 թ.), **Лызлов Д. Н., Каргужин В. Ю.** Юридическая техника: учебное пособие. – М.: Ось-89, 2009, էջ 8, 15:

¹¹ Այնուհետև սկսեցին հրատարակվել համապատասխան ուսումնական ձեռնարկներ: St' u, օրինակ՝ **Суслин Э. В.** Юридическая техника: учебное пособие. – СПб., СЮА, 2017, 336 էջ, **Томин В. А.** Юридическая техника: учебное пособие. – 2-е изд., перераб. и доп. – СПб., Санкт-Петербургский юридический институт (филиал) Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2015, 84 էջ, **Яловенко Т. В.** Юридическая техника: учебное пособие. – Волгоград: ВА МВД России, 2022, 88 էջ և այլն:

¹² Ս. Վ. Կաշանինան, դիտարկելով իրավաբանական տեխնիկան որպես ճանաչողական նշանակություն ունեցող գիտական իմացության համակարգ, նշում է, որ դրա խնդիրն է ուսումնասիրել իրավաստեղծագործության և իրավակիրառման բնագավառներում օբյեկտիվ իրականությունը, հաստատել դրանցից յուրաքանչյուրում, ինչպես նաև դրանց միջև կապերը, սահմանել այդ բնագավառներում գոյություն ունեցող օրինաչափությունները (տե՛ս **Кашанина Т. В.** Юридическая техника. – М. Эксмо, 2007, էջ 25-29):

այդ, կա՛մ դրանից հետո) նորմատիվ ակտերի հաշվառման և համակարգման աշխատանք, հակառակ դեպքում իրավաստեղծ աշխատանքը կարող է լինել անարդյունավետ, կամ նախքան իրավական հարաբերությունը հաստատելը հարկ է կատարել իրավունքի նորմի մեկնաբանություն, կամ նախքան որևէ իրավահարաբերության մեջ մտնելն անհրաժեշտ է կանոնակարգել իրավական կարգավիճակը (օրինակ՝ ձեռք բերել քաղաքացիություն)¹³: Այս մոտեցմամբ Տ. Վ. Կաշանինան առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի հետևյալ վեց տեսակները՝ իրավաստեղծագործական, նորմատիվ ակտերի հրապարակման, նորմատիվ ակտերի համակարգման, մեկնաբանման, իրավաիրացման, իրավակիրառական:

Իրավաբանական տեխնիկայի դասակարգման հիմնախնդրի վերաբերյալ նույն մոտեցումն է որդեգրել Վ. Ա. Տոմինը, ով ևս, հիմք ընդունելով իրավական կարգավորման հիմնական երեք փուլերը (էտապները), առանձնացրել է իրավաբանական տեխնիկայի հետևյալ տեսակները՝ իրավաստեղծագործական, նորմատիվ ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու, մեկնաբանական, իրավահամակարգման, իրավաիրացման, իրավակիրառական¹⁴:

Այսպիսով, իրավաբանական տեխնիկան ունի իր տեսակները, որոնցից մեկն էլ իրավաստեղծագործական տեխնիկան է, որն իրավագիտության մեջ հասկանում են որպես նորմատիվ իրավական ակտերի բովանդակության ձևավորմանը (իրավունքի նորմերի ստեղծմանն) ուղղված ընդհանուր և սոցիալ-իրավական պահանջների ամբողջություն¹⁵: Ըստ իրավաբանական ուժի՝ նորմատիվ իրավական ակտերը բաժանվում են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի: Այս տեսակներն ունեն իրենց բովանդակային, կառուցվածքային և ընդունման առանձնահատկությունները: Նորմատիվ իրավական ակտերի այդպիսի առանձնահատկություններ առանձնացված են նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներում: Օրինակ՝ նշված օրենքի 14-րդ հոդվածի ամրագրումներից բխում է, որ միայն օրենսդրական ակտերը կարող են ունենալ ընդհանուր և հատուկ մասեր, կամ օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում՝ հերթական համար ունեցող կետերի տեսքով և այլն:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ ըստ նորմատիվ իրավական ակտերի տեսակների՝ իրավաստեղծագործական տեխնիկան կարելի է բաժանել երկու ենթատեսակի՝ օրենսդրական տեխնիկա (նեղ իմաստով) և ենթաօրենսդրական

¹³ Տե՛ս **Кашанина Т. В.** նշվ. աշխ., էջ 85:

¹⁴ Տե՛ս **Томин В. А.** նշվ. աշխ., էջ 20:

¹⁵ Տե՛ս **Кокориков Д. В.** Содержание понятия «правотворческая техника», его научная новизна и ценность. Общество и право. 2011, № 2 (34), էջ 55-60, file:///C:/Users/User/Downloads/soderzhanie-popyatiya-pravotvorcheskaya-tehnika-ego-nauchnaya-novizna-i-tsennost.pdf (մուտք՝ 22.01.2026 թ.):

նորմատիվ իրավական ակտերի ստեղծման տեխնիկա: Որպես իրավաստեղծագործական տեխնիկայի ենթատեսակ՝ օրենսդրական տեխնիկան պետք է հասկանալ օրենքների, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման տեխնիկան՝ այդպիսի ակտեր ստեղծելուն ուղղված կանոնների, գործիքների և հնարքների ամբողջություն:

Հիմք ընդունելով իրավաստեղծագործական տեխնիկայի այնպիսի հասկացումը, որ այն նորմատիվ իրավական ակտերի ստեղծմանն ուղղված կանոնների, հնարքների, եղանակների ամբողջություն է, պետք է նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխի և 21-րդ հոդվածի վերտառություններում առկա է եզրույթաբանական սխալ: Նման անճշտություն պարունակում էր նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի վերտառությունը, ինչին անդրադարձել ենք նախկինում մեր կողմից կատարված հետազոտությունում¹⁶:

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտության մեջ առաջ քաշված հիմնահարցերի վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետների վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ իրավաբանական տեխնիկան ընդգրկում է ոչ միայն իրավաստեղծագործությունը, այլև իրավաբանական գործունեության այլ ոլորտներ: Այն ընդհանրապես իրավաբանական փաստաթղթեր պատրաստելու, կազմելու, ձևակերպելու կանոնների, հնարքների, եղանակների ամբողջություն է և ներառում է ինչպես իրավաստեղծագործական տեխնիկան, այնպես էլ օրենսդրական տեխնիկան:

Իրավաստեղծագործական տեխնիկան իրավաբանական տեխնիկայի տեսակ է և ուղղված է հասարակության համար անհրաժեշտ որակյալ նորմատիվ իրավական ակտեր ստեղծելուն: Իրավաստեղծագործական տեխնիկան, որպես նորմատիվ իրավական ակտեր ստեղծելու կանոնների, հնարքների ամբողջություն, բաժանվում է ենթատեսակների օրենսդրական տեխնիկա և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ստեղծելու տեխնիկա: Վերջինս կանոնների, հնարքների ամբողջություն է, թե ինչպես պատրաստել, ձևակերպել և ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Առաջին ենթատեսակի տակ պետք է հասկանալ նեղ իմաստով օրենսդրական տեխնիկան:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը վերնագրված է «Օրենսդրական տեխնիկայի կանոններ», որում ամրագրված են ընդհանրապես նորմատիվ իրավական ակտերի շարադրման ու կառուցվածքի իրավատեխնիկական կանոնները: Այդ գլխի կարգավորման առարկան, ինչպես

¹⁶ Տե՛ս **Քոչարյան Ս.** Իրավաբանական տեխնիկայի և օրենսդրական տեխնիկայի հարաբերակցությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / Գլխ. խմբ.: Գ. Ս. Ղազինյան, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 375:

նաև ամրագրված կանոնների բովանդակությունը հաստատում են, որ խոսքը ոչ միայն օրենքների ստեղծման տեխնիկայի, այսինքն՝ օրենսդրական տեխնիկայի, այլև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ստեղծման մասին է: Վերը նշված հանգամանքները նկատի ունենալով՝ կարիք կա փոխելու «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի վերտառությունը՝ վերանվանելով այն «Իրավաստեղծագործական տեխնիկայի կանոններ» և համապատասխանաբար՝ նաև 21-րդ հոդվածի վերտառությունը՝ վերանվանելով այն «Իրավաստեղծագործական տեխնիկայի այլ կանոններ»:

СЕРГЕЙ КОЧАРЯН – Правотворческая техника в контексте юридической техники. – Цель данного исследования - выявить семантические различия между терминами «юридическая техника», «правотворческая техника» и «законодательная техника», обосновать существование правотворческой техники как отдельного вида юридической техники.

Юридическая техника охватывает не только юридическую практику, но и другие области юридической практики. В целом, это совокупность правил, приемов и методов подготовки, составления и оформления юридических документов, и включает в себя как технику юридической практики, так и законодательную технику.

Для достижения этой цели в статье рассматриваются различные подходы к их пониманию в теоретической литературе, основные вопросы различения юридической техники на типы и подтипы, что позволило выделить подтипы правотворческой техники.

Ключевые слова: юридическая техника, правотворческая техника, законодательная техника, нормативно-правовой акт, классификация, законотворчество, совокупность правил, юридическая деятельность

SERGEY KOCHARYAN – Law-Making Technique in the Context of Legal Technique. – The purpose of this study is to identify the semantic differences between the terms “legal technique”, “law-making technique” and “legislative technique”, and to substantiate the existence of “law-making technique” as a separate type of legal technique.

Legal technique encompasses not only legal practice but also other areas of legal practice. Generally, it encompasses the rules, techniques, and methods of preparing, drafting, and executing legal documents, and includes both legal practice technique and legislative technique.

To achieve this goal, the article examines various approaches to their understanding in the theoretical literature, the main issues of distinguishing legal technique into types and subtypes, which made it possible to identify subtypes of law-making technique.

Key words: legal technique, law-making technique, legislative technique, normative legal act, classification, lawmaking, set of rules, legal activity

Գրականության ցանկ / References


Նազարյան Վ. Օրենսդրական տեխնիկայի տարրական կանոնները, Երևան, 1999 թ., 131 էջ: [Nazaryan V. Orensdrakan te[nikaji tarrakan kanwnnery, Yerevan, 1999 t., s. 131].

Քոչարյան Ս. Իրավաբանական տեխնիկայի և օրենսդրական տեխնիկայի հարաբերակցությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / Գլխ. խմբ. Գ. Ս. Ղազինյան. - Եր.: ԵՊՀ հր., 2012, 608 էջ: [Kocharyan S. Iravabanakan texnikayi yev orensdrakan texnikayi

- haraberakcutyuny. EPH iravagitutyany fakulteti profesorasaxosakan kazmi gitajoghovi nyuteri jwghovacu / Glx. Xmb. G. S. Ghazinyan. – Yer.: Eph, 2012, s. 608].
- Vozniak I. Legislative drafting technique as a factor of guaranteeing the rule of law, Visegrad Journal on Human Rights, № 3, 2025, p. 94-99, DOI: <https://doi.org/10.61345/1339-7915.2025.3.15>:
- Алексеев С. С. Общая теория права: учебник – 2-ое изд., - М.: Проспект, 2009, с. 576. [Alekseev S. S. Obshaya teoriya prava: uchebnik. – 2-e izd., pererb. i dop. – М.: Prospekt, 2009, s. 576].
- Венгеров А. Б. Теория государства и права: учеб. для юрид. вузов. – 4-е изд., стер. – Москва: Омега-Л, 2007, с. 528. [Vengerov A. B. Teoria gosudarstva i prava: ucheb/ dlya yurid. vuzov. – 4-e izd., ster. – Moskva: Omega-L, 2007, s. 528].
- Карташов В. Н. Юридическая техника, тактика, стратегия, технология (к вопросу о соотношении) / В кн.: Проблемы юридической техники. Т. 1. – Н. Новгород, 2000, с. 547. [Kartashov V. N. Teoriya pravovoy sistemi obshestva. V 2 t. T. 1. – Yaroslavl: YarGu, 2005, s. 547].
- Кашанина Т. В. Юридическая техника. - М. Эксмо, 2007, с. 512. [Kashanina T. V. Yuridicheskaya tehnika: uchebnik. – М.: Eksmo, 2007, s. 512].
- Кокориков Д. В. Содержание понятия «правотворческая техника», его научная новизна и ценность. Общество и право. 2011, № 2 (34), 55-60 [t2t2r file:///C:/Users/User/Downloads/soderzhanie-ponyatiya-pravotvorcheskaya-tehnika-ego-nauchnaya-novizna-i-tsennost.pdf](file:///C:/Users/User/Downloads/soderzhanie-ponyatiya-pravotvorcheskaya-tehnika-ego-nauchnaya-novizna-i-tsennost.pdf). [Kokorikov D. V. Soderjanie ponyatiya “pravotvorcheskoy tehniki”, ego nauchnaya novizna i cennost. Obshestvo i pravo. 2011, № 2 (34), s. 55-60 <file:///C:/Users/User/Downloads/soderzhanie-ponyatiya-pravotvorcheskaya-tehnika-ego-nauchnaya-novizna-i-tsennost.pdf>].
- Кругликов Л. Л., Спиридонова О.Е. Юридические конструкции и символы в уголовном праве. СПб.: Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2005, с. 336. [Kruglikov L. L., Spiridonov O. E. Yuridicheskie konstrukcii i simvoli v ugovolnom prave. SPb.: Izdatelstvo R. Aslanova «Yuridicheskiy centr Press», 2005, s. 336].
- Лызлов Д. Н., Картухин В. Ю. Юридическая техника: учебное пособие. – М.: Ось-89, 2009, с. 174. [Lizlov D. N., Kartuxin V. Yu. Yuridicheskaya tehnika: uchebnoe posobie. - М.: Os-89, 2009, s. 174].
- Мухаев Р. Т. Теория государства и права: Учебник. – М.: Юрист, 2006, с. 572. [Muxayev R. T. Teoria gosudarstva i prava: Uchebnik. – М.: Yurist, 2006, s. 572].
- Проблемы теории государства и права: учебник / под ред. В. М. Сырых. М., 2008, с. 528. [Problemi teorii gosudarstva i prava: uchebnik / pod red. V. M. Sirix. M.. 2008, s. 528].
- Пьянов Н. А. Теория государства и права: учеб. пособие. В 2 ч. Ч. 2. Теория права. – Иркутск: Изд-во Иркут. гос. ун-та, 2011, с. 300. [Pyanov N. A. Teoria gosudarstva i prava: ucheb. posobie. V 2 ch. Ch. 2. Teoria prava. – Irkutsk: Izd-vo Irkut. gos. un-ta, 2011, s. 300].
- Соловьев О. Г. Преступления в сфере налогообложения (ст. 194, 198, 199 УК РФ): проблемы юридической техники и дифференциации ответственности: автореф. дис. ... канд. юрид. наук. Казань, 2002, с. 18. [Solovyov O. G. Prestupleniya v sfere nalogooblojenia (st. 194, 198, 199 UK RF): problem yuridicheskoy tehniki i differenciacii otvestvennosti: avtoref. dis. ... kand. yurid. nauk. Kazan, 2002, s. 18].
- Соловьев О. Г., Санташов А. Л. Дискуссионные вопросы определения видов юридической техники в теории права. Юридическая наука. 2013, № 4, 35-38, <https://cyberleninka.ru/article/n/diskussionnye-voprosy-opredeleniya-vidov-yuridicheskoy-tehniki-v-teorii-prava/viewer>. [Solovyov O. G., Santashov A. L. Disskussionnie voprosi opredeleniya vidov yuridicheskoy tehniki v teorii prava. Yuridicheskaya nauka. 2013, № 4, 35-38,

- <https://cyberleninka.ru/article/n/diskussionnye-voprosy-opredeleniya-vidov-yuridicheskoy-tehniki-v-teorii-prava/viewer>].
- Суслин Э. В. Юридическая техника: учебное пособие. – СПб, СЮА, 2017, с. 336. [Suslin E. V. Yuridicheskaya tehnika: uchebnoe posobie. – SPb, SYuA, 2017, s. 336].
- Теория государства и права: учеб. для вузов / под ред. М. М. Рассолова, В. О. Лучина, Б. С. Эбзеева. М.: Юнити-Дана, 2000, с. 640. [Teoria gosudarstva i prava: ucheb. dlya vuzov / pod red. M. M. Rassalova, V. O. Luchina, B. S. Ebzaeeva. M.: Yuniti-Dana, 2000, s. 640].
- Томин В. А. Юридическая техника: учебное пособие. – 2-е изд., перераб. и доп. – СПб, Санкт-Петербургский юридический институт (филиал) Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2015, с. 84. [Tomin V. A. Yuridicheskaya tehnika: uchebnoe posobie – 2-e izd., pererab. i dop. - SPb, Sankt-Peterburgskiy yuridicheskiy institute (filial) Akademii Generalnoy prakuraturi Rossiyskooy Federacii, 2015, p. 84].
- Черданцев А. Ф. Теория государства и права: Учебник для вузов. - М.: Юрайт-М, 2002, с. 432. [Cherdancev A. F. Teoria gosudarstva i prava: Uchebnik dlya vuzov. – M.: Yurayt-m, 2002, s. 432].
- Яловенко Т. В. Юридическая техника: учебное пособие. – Волгоград: ВА МВД России, 2022, с. 88. [Yakovenko T. V. Yuridicheskaya tehnika: uchebnoe posobie. – Volgograd: VA MVD Rossii, 2022, s. 88].

ՋՈՆ ՌՈՒԼՍԻ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՍՏԵՂՉՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ

ՄԵԼԻՆԵ ՍԱՀՐԱԴՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում վերլուծվում է Ջոն Ռոուլսի «արդարությունը որպես անաչառություն» (Justice as Fairness) տեսությունը՝ այն դիտարկելով իբրև հանրային կառավարման և իրավական համակարգերի գնահատման նորմատիվ չափանիշ: Հիմնավորվում է, որ ձևական օրինականությունն ու կառավարման արդյունավետությունը ինքնին չեն երաշխավորում արդարություն: «Անտեղյակության վարագույրի» մեթոդաբանական մոտեցումը հնարավորություն է տալիս մշակելու այնպիսի իրավական նորմեր, որոնք կլինեն անաչառ և հավասարապես ընդունելի բոլորի համար՝ անկախ սոցիալական դիրքից կամ անհատական հանգամանքներից: Հայաստանի Հանրապետության 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները, հատկապես «կայուն մեծամասնության» ինստիտուտը, վերլուծվում են Ռոուլսի տեսության լույսի ներքո՝ բացահայտելով քաղաքական մասնակցության և ինստիտուցիոնալ հավասարակշռության խնդիրները: Եզրակացվում է, որ հանրային իշխանության լեգիտիմությունը պահանջում է անցում ձևական իրավաչափությունից դեպի բովանդակային արդարություն՝ ապահովելով հավասար հնարավորություններ, հաշվետվողականություն և ինստիտուցիոնալ թափանցիկություն:

Բանալի բառեր – *արդարություն, արդարությունը որպես անաչառություն, հանրային կառավարում, իրավաստեղծագործություն, օրինականություն, լեգիտիմություն, հավասար հնարավորություն, տարբերության սկզբունք, անտեղյակության վարագույր, կայուն մեծամասնություն*

Ներածություն

Յուրաքանչյուր դարաշրջան ձևավորում է իր յուրօրինակ պատկերացումները կյանքի, ազատության, մարդու առաքելության, սոցիալական իդեալների և հասարակական կարգի, իշխանության, հանրային կառավարման մասին:

Մելինե Սահրադյան – ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ամբիոնի հայցորդ

Мелине Сахрадян – соискатель кафедры теории государства и права ЕГУ

Meline Sahradyan – Applicant at YSU Chair of Theory and History of State and Law

Էլ. փոստ՝ melinesahradian@gmail.com ORCID ID: <https://orcid.org/0009-0005-8913-1879>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 24.01.2026

Գրախոսվել է՝ 08.02.2026

Հաստատվել է՝ 02.06.2026

© The Author(s) 2026

Այդ հիմնարար իրողություններից մեկն է արդարությունը, որը փիլիսոփայական մտածողության ծագման պահից ի վեր եղել է սոցիալական, բարոյագիտական, քաղաքական, կրոնական և տնտեսագիտական վերլուծությունների առանցքում:

Արդարությունը դուրս է գալիս զուտ տեսական-բարոյական շրջանակից և դառնում է իրավաքաղաքական կառուցակարգ, որն ուղղակիորեն ազդում է և պետք է ազդի հանրային իշխանության գործունեության ձևերի, մեթոդների և արդյունքների վրա: Հետևաբար, արդարությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես փիլիսոփայական կամ բարոյական կատեգորիա, այլ որպես հանրային կառավարման անբաժան չափանիշ, որն ապահովում է իշխանության գործողությունների լեգիտիմությունը և հանրային վստահության հիմքը:

Հանրային իշխանությունը՝ որպես սահմանադրական կառավարման հիմնական սուբյեկտ, ենթակա է ոչ միայն իրավական և օրինականության, այլև արդարության սկզբունքի վերահսկողության: Արդարության գաղափարը հնարավորություն է տալիս ձևակերպելու հանրային իշխանության՝ սույն հոդվածի շրջանակներում իրավաստեղծագործության **ոչ միայն իրավաչափ**, այլ նաև **արդար լինելը**, ինչը հատուկ կարևորություն է ստանում հասարակական լեգիտիմության տեսանկյունից: Արդարությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես վերացական գաղափար, այլ որպես **փաստացի չափանիշ**, որը պայմանավորում է պետական իշխանության պատասխանատվության բնույթը:

Նույնիսկ այն հանգամանքը, որ իրավական օրենքների ընդունմանը մասնակցում են ոչ թե մեկ անձ, այլ բազմաթիվ անձինք, դեռ չի նշանակում, թե օրենքները միշտ արդար են, իսկ արդարությունը դրանից փոխվում է: Պատճառն այն է, որ արդարությունն իսկապես ձևավորվում է հասարակության պատմական զարգացման ընթացքում և կախված չէ անհատի կամքից: Այսինքն՝ արդարությունն ինքնին սոցիալական է և չի կարող հաստատվել անհատականորեն¹:

Գիտության տեսանկյունից, օրինակ, ժողովրդավարությունն ու լիբերալիզմը սոցիալական կազմակերպման ընդամենը երկու հնարավոր սկզբունք են, ինչպես որ ավտոկրատիան և սոցիալիզմը: Գիտական որևէ պատճառ չկա, որ իրավունքի հասկացությունը սահմանվի այնպես, որ վերջինները բացառվեն: «Որոշակի սոցիալական կարգը ունի իրավունքի բնույթ, այսինքն՝ իրավական կարգ է» պնդումը չի ենթադրում բարոյական դատողություն, թե այդ կարգը լավ է կամ արդար: Կան իրավական կարգեր, որոնք որոշ տեսակետից անարդար են: Իրավունքն ու արդարությունը երկու տարբեր հասկացություններ են: Արդարությունից տարբերակված իրավունքը դրական իրավունքն է: Դրական իրավունքի գիտությունը պետք է հստակ տարբերակվի արդարության փիլիսոփայությունից²:

¹ Տե՛ս **Арендаренко, А. В.** (2009): Основные современные подходы к понятию социальной справедливости в теории права. *Право и управление. XXI век.* 2(11), էջ 22:

² Տե՛ս **Kelsen Hans** (1945): *General Theory of Law and State* (Harvard University Press), էջ 5:

Պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող է իրավակարգավորումը հանգեցնել հասարակական փլուզման: Վայմարի Հանրապետության սահմանադրության 48-րդ հոդվածը³ նախագահի արտակարգ լիազորությունների մասին թեև ձևականորեն իրավաչափ էր, սակայն թույլ տվեց կիրառել այն քաղաքական ճնշման և ժողովրդավարական ինստիտուտների կազմաքանդման համար՝ ի վերջո հանգեցնելով հիտլերյան ռեժիմի օրինականացմանը: Նախագահին տրված արտակարգ լիազորությունների ծավալը և խորհրդարանական համակարգի միջև գոյություն ունեցող երկակիությունը դարձան այն իրավական մեխանիզմները, որոնց միջոցով օրինական ճանապարհով հնարավոր եղավ սահմանափակել քաղաքացիների հիմնական իրավունքները: 1933 թ. Հիտլերի կառավարության նախաձեռնությամբ ընդունված Ռայխստագի հրդեհի հրահանգը և Լիազորությունների մասին օրենքը ակնհայտորեն օգտագործեցին այդ թույլ կողմերը՝ օրենքի շրջանակներում չեզոքացնելով սահմանադրական անվտանգության երաշխիքները և հանգեցնելով ժողովրդավարական կարգի ոչնչացմանը:

Ընդ որում, պատմությունը ցույց է տալիս, որ այն, ինչ գրված է թղթի վրա որպես օրենք, դեռևս չի ենթադրում, որ հենց դա է ամենաարդարացին, ինչպես պնդում էր Հոբսը: Վերջինիս մեկնաբանությամբ՝ մարդու գործողությունների արդարությունը նշանակում է «իրավունքի համաձայն կատարված գործողություն», իսկ անարդարը՝ «իրավունքի դեմ գործողություն»: «Հասարակությունում բարօրության հասնելու պայմաններ ապահովելու և դրանք պահպանելու գործիքը Հոբսը համարում էր պետությունը, որը ընդունում է բանական, այսինքն՝ արդար օրենքներ՝ ապահովելով քաղաքացիների կյանքն ու անվտանգությունը»⁴: Նրա կարծիքով՝ արդարությունը բնական օրենքների պահպանումն է:

Ուստի իրապես արդարությունը առանց կոնկրետ լուսանցքների դառնում է լոկ վերացական հասկացություն, և դրան մարմին տալու համար անհրաժեշտ է դառնում փնտրել այն ուղիները, որոնք հնարավորինս կմոտեցնեն դրա գործնական չափանիշներին:

Պարզ է դառնում, որ արդարության չափանիշներից մեկը կարելի է համարել օրենքի ստեղծման հիմքում ընկած սկզբունքները. ինչպե՞ս անել, որ հանրային իշխանության կողմից օրենքները ընդունվեն և կիրառվեն արդարության չափանիշը դիտարկելով որպես իրավաստեղծագործության հիմնարար առանցք: Ի պատասխան այս հարցադրման՝ իր տեսլականն է առաջարկել Ջոն Ռոլսը իր «արդարությունը որպես անաչառություն» տեսությամբ, որը կքննարկենք ստորև:

³ Տե՛ս Վայմարյան Սահմանադրություն (1919), էջ 48:

⁴ **Савсерис, ОП АП** (2007) Проблема справедливости в концепции Дж. Роулза: социально-философский анализ Чита С. 26.

Ջոն Ռոլսի «արդարությունը որպես անաչառություն» տեսության հիմնարար դրույթները

Արդարությանը՝ որպես փիլիսոփայական կատեգորիայի անդրադարձել են բազմաթիվ մտածողներ՝ այն ներկայացնելով տարբեր ուղղությունների լույսի ներքո, այդ թվում՝ նաև իրավական կամ իրավաբանական: Այս մտածողներից առանձնապես հիշատակելի է ամերիկացի փիլիսոփա Ջոն Ռոլսը: Նրան հաճախ բնութագրում են որպես 20-րդ դարի ամենանշանավոր բարոյափիլիսոփա և քաղաքական փիլիսոփա: «Արդարության տեսությունը» հրատարակվել է 1971 թվականին, որով Ռոլսը հիմնարար ներդրում է ունեցել բաշխիչ արդարության խնդրի լուծման և սոցիալական հաստատությունների հիմնավորման վերաբերյալ ավանդական փիլիսոփայական մոտեցումներին հակադրվելու գործում⁵: Ջոն Ռոլսի «արդարության տեսությունը» հանդես է գալիս որպես այլընտրանք ԱՄՆ-ում 1970-ականներին գերիշխող ուտիլիտարիստական միտումներին և ժամանակակից հասարակության վերլուծության մեջ՝ Հոբսի, Լոքի և Ժ.-Ժ. Ռուսոյի աշխատություններում ներկայացված հասարակական պայմանագրի ավանդական տեսության կիրառման գաղափարին:

Ռոլսը նպատակ ուներ սահմանելու արդարության սկզբունքներ, որոնք կարող էին ծառայել որպես համընդհանուր չափանիշ սոցիալական համակարգերի բարոյական գնահատման համար: Նա կարծում էր, որ արդարությունը չի կարող լինել այնպիսի հասկացություն, որը սահմանում է «հասարակության հիմնական կառուցվածքի» բոլոր առաքիներությունները, որոնք նա մեկնաբանում էր որպես անհատների կողմից ընդունված սոցիալական համագործակցության կանոնների ամբողջություն: «Ընդհանուր հասկացությունը, որը սահմանում է հիմնական կառուցվածքի բոլոր առաքիներությունները՝ դրանց հակասական բնույթի համապատասխան հետևանքներով, ավելին է, քան արդարության հասկացությունը. այն սոցիալական իդեալ է: Արդարության սկզբունքները նման հասկացության միայն մի մասն են, թեպետև, թերևս, ամենակարևոր մասը»⁶: Ըստ Ռոլսի՝ դրանք ապահովում են ռացիոնալ չափանիշներ, որոնց միջոցով կարելի է գնահատել հասարակության հիմնական կառուցվածքի բաշխական կողմերը, որոնք, արդարության տեսանկյունից գնահատվող կանոններից բացի, ներառում են նաև արդյունավետության և ազատության չափանիշներին համապատասխանող կանոններ:

Որպես սոցիալական առավելությունների բաշխման գնահատման նորմատիվ չափանիշներ՝ արդարության սկզբունքները պետք է լինեն ընդհանուր առմամբ վավեր, համընդհանուր և հավասարապես ընդունելի հասարակության բոլոր անդամների համար՝ անկախ նրանց բնական կարողություններից,

⁵ Տե՛ս **Peterdy Kyle** (2020)՝ *A Theory of Justice* (Corporate Finance Institute, 2020), <https://corporatefinanceinstitute.com/resources/esg/a-theory-of-justice/>.

⁶ Տե՛ս **John Rawls** (1999). *A Theory of Justice*, rev. ed. (Cambridge, MA: Harvard University Press, 1999), էջ 9–10:

սոցիալական կարգավիճակից, զբաղմունքից, հակումներից և այլն: Ռոլսը հասկանում է, որ իրական հասարակությունում անհնար է հասնել նման համաձայնության մարդկանց միջև, քանի որ բոլորը, գիտակցելով իրենց դիրքը հասարակությունում, իրենց սոցիալական առավելություններն ու թերությունները, կարողությունները, ճաշակը և այլն, նախապատվությունը կտան արդարության այն սկզբունքներին, որոնք կստեղծեն առավել բարենպաստ պայմաններ ցանկալի սոցիալական օգուտներին հասանելի լինելու համար⁷: Ռոլսի եզրակացությունը տարբեր կարողություններ ունեցողների համար մշակութային զարգացման և անձնական նվաճումների հավասար հնարավորություններ ապահովելու անհնարինության մասին է: Անհրաժեշտ է միայն ձգտել սահմանափակել բնական և սոցիալական պատահարների կամայական ազդեցությունը: Այս փաստարկների տրամաբանությունը Ռոլսին հանգեցնում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է ձևակերպել արդարության համընդհանուր սկզբունքներ, որոնք կարող են ընդունելի լինել հասարակության բոլոր անդամների համար և բավարարել նրանց արդարության բնական պահանջը:

Մեփական բարեկեցությունը բարձրացնելու համար պետք է հիմնվել ոչ թե իրական հասարակության և իրական անհատների, այլ սոցիալական համագործակցության հիպոթետիկ մոդելի վրա: Մա մի տեսակ մտային փորձ է, որը անհատներին հասցնում է բացարձակ անտեղյակության վիճակի՝ հասարակությունում իրենց տեղի, դասակարգային դիրքի և սոցիալական կարգավիճակի, իրենց բնական կարողությունների, հոգեբանական հակումների, ճաշակի և այլնի վերաբերյալ: Ռոլսի կարծիքով՝ անհատները նույնպես չպետք է առաջնորդվեն բարու և չարի մասին իրենց անձնական պատկերացումներով: Ռոլսը այս հիպոթետիկ իրավիճակը բնութագրում է որպես «սկզբնական դիրք» (original position), որը արդարության սկզբունքների ընտրության պայմանն է⁸:

Այսպես, արդարության փիլիսոփայական մեկնաբանության մեջ առանձնանում է Ջոն Ռոլսի «արդարությունը որպես անաչառություն» (*Justice as Fairness*) տեսությունը, որը նկարագրում է ազատ քաղաքացիների հասարակությունը, որոնք ունեն հավասար հիմնական իրավունքներ և համագործակցում են հավասար տնտեսական համակարգի շրջանակներում⁹: «Այս տեսության համաձայն՝ արդարության սկզբունքները պետք է ընտրվեն **«անտեղյակության վարագույրի հետևում»**՝ առանց որևէ մեկի նախնական տեղեկացվածության իր սոցիալական դիրքի, կարողությունների կամ ապագա կարգավիճակի մասին: Փաստորեն, ամերիկացի փիլիսոփան առաջարկում է պատկերացնել, որ մարդիկ ամեն

⁷ Տե՛ս **Оганесян, А. К.** (1990): *Этическая Мысль: Науч.-Публицист. Чтения; Равенство и Справедливость (Концепции Д. Роулса и Д. Белла)*՝ Политиздат, n.d.:

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Տե՛ս Տե՛ս **John Rawls** նշվ. աշխ. :

ինչ սկսում են գրոյից՝ առանց իմանալու, թե իրենք ինչ դիրք կունենան նոր հասարակության մեջ: Այս երևակայական իրավիճակը նա կոչում է նախնական դիրքորոշում (original position) և առաջարկում է պատկերացնել, որ մարդիկ պետք է ընտրեն հասարակության կանոնները՝ առանց իմանալու իրենք հարուստ են լինելու, թե աղքատ, մեծամասնության մեջ են, թե փոքրամասնության, տղամարդ են, թե կին: Այս անտեղյակության պայմաններում նրանք կընտրեն այնպիսի կանոններ, որոնք արդար են բոլորի համար:

Ռոլարը կարծում է, որ սկզբնական դիրքում «մարդիկ չեն փորձում շահ ստանալ միմյանց հաշվին, չեն նախանձում և չեն մեծամտանում, նրանք ունեն արդարության զգացման կարողություն»¹⁰: Այսպիսով կառուցվում է «անտեղյակության վարագույրի» հիմքը սկզբնական դիրքի համար: Այստեղ նկատվում է Հոբսի և Ռոլարի տեսությունների ժառանգական կապը: Ըստ Հոբսի՝ անհատները բնական թշնամական վիճակից դուրս գալու համար պատրաստ են հրաժարվել «ամեն ինչի իրավունքի» իրենց պահանջից՝ հասարակական պայմանագիր կնքելով: Ռոլարն ավելացնում է, որ մարդիկ պայմանագիր կնքելիս չգիտեն իրենց դասային դիրքը, տաղանդները և հասարակության մեջ իրենց սոցիալական դերը, ուստի համաձայնվում են պայմանագրի ընդունմանը նույն հավասար պայմաններում¹¹:

Ռոլարը ձևակերպում է երկու սկզբունք.

- առաջինը՝ բոլոր մարդիկ պետք է ունենան հավասար հիմնական ազատություններ՝ խոսքի, խղճի, կրոնի, քվեարկելու և այլն,
- երկրորդը՝ թույլատրվում են միայն սոցիալական և տնտեսական այն տարբերությունները, որոնք օգուտ են տալիս նաև ամենաաղքատներին և երաշխավորում են հավասար հնարավորություններ բոլորի համար՝ անկախ ծննդից:

Տարբերության սկզբունքի համաձայն՝ սոցիալական և տնտեսական անհավասարությունները պետք է դասավորվեն այնպես, որ ապահովեն ամենամեծ օգուտը ավելի քիչ երջանիկների համար՝ միաժամանակ տարածվելով բոլորի համար հավասարապես՝ արդար հավասար հնարավորությունների պայմաններում¹²: Օրինակ, եթե բարձր աշխատավարձերը խրախուսում են կրթություն ստանալը և արդյունքում օգուտ են բերում նաև մյուսներին՝ դա արդար է, իսկ եթե հարստությունը կենտրոնանում է մի փոքր խմբի ձեռքում, իսկ մնացածը դուրս են մնում՝ դա անարդար է:

«Արդարությունը որպես անաչառություն» տեսության մեջ սկզբնական հավասարության դիրքը համապատասխանում է ավանդական հասարակական

¹⁰ Տե՛ս **In E. N. Zalta & U. Nodelman (Eds.)**, Stanford Encyclopedia of Philosophy. (2023). *Original Position*. *The Stanford Encyclopedia of Philosophy* (Spring 2024 Edition). <https://plato.stanford.edu/entries/original-position/>:

¹¹ Տե՛ս **Савсерис, О. А.** նշվ. աշխ., էջ 40:

¹² Տե՛ս **Оганесян, А. К.** նշվ. աշխ. :

պայմանագրի տեսության «բնության վիճակին»: Ըստ Ռոլսի՝ տրամաբանական պետք է լինի մաքսիմինի կանոնի ճանաչումը որպես յուրաքանչյուր անհատի համար ընդունելի սոցիալական բարիքների արդար բաշխման միակ չափանիշ: Քանի որ սկզբնական դիրքում անհատները չգիտեն իրենց բաժինը բնական և սոցիալական առավելությունների (սոցիալական կարգավիճակ, նյութական անվտանգություն, ընտանեկան հանգամանքներ, բնական տաղանդներ և այլն) բաշխման մեջ այն հասարակությունում, որտեղ նրանք կապրեն բարոյական մաքսիմների համատեղ հոչակումից հետո, նրանք, ըստ Ռոլսի, ստիպված կլինեն նվազագույնի հասցնել սեփական հնարավոր ձախողման ռիսկը:

«Արդարությունը որպես անաչառություն» տեսության մեջ սկզբնական հավասարության դիրքը համապատասխանում է ավանդական հասարակական պայմանագրի տեսության «բնության վիճակին»: Ըստ Ռոլսի՝ տրամաբանական է մաքսիմինի (maximin)¹³ կանոնի ճանաչումը որպես յուրաքանչյուր անհատի համար ընդունելի սոցիալական բարիքների արդար բաշխման սկզբունք: Քանի որ սկզբնական դիրքում անհատները չգիտեն իրենց բաժինը բնական և սոցիալական առավելությունների (սոցիալական կարգավիճակ, նյութական անվտանգություն, ընտանեկան հանգամանքներ, բնական տաղանդներ և այլն) բաշխման մեջ այն հասարակությունում, որտեղ նրանք կապրեն արդարության սկզբունքների ընդունումից հետո, նրանք, ըստ Ռոլսի, հակված կլինեն նվազագույնի հասցնել հնարավոր վատագույն ելքի ռիսկը:

Սկստենք, սակայն, որ այս տեսությունը հիմնովին հակադրվում է օգտակարության դասական մոտեցմանը: Դասական ուտիլիտարիզմի հիմնական սկզբունքներն են՝ օգտակարություն, երջանկություն և հաճույք: Ուտիլիտարիստների կարծիքով՝ լավագույնը այն հասարակական կառուցվածքն է, որը հանգեցնում է առավելագույն թվով մարդկանց երջանկությանը: Այսպիսով, գործողությունը համարվում է օգտակարության սկզբունքին համապատասխան, երբ այն ավելի շատ նպաստում է հասարակության երջանկությանը, քան խոչընդոտում այն: Սա վերաբերում է ոչ միայն անհատական, այլև պետական որոշումներին¹⁴:

¹³ Մաքսիմին (maximin) կանոնը որոշումների ընդունման սկզբունք է, որի համաձայն ընտրությունը կատարվում է այնպես, որ հնարավոր տարբերակներից ընտրվի այն տարբերակը, որի ամենավատ հնարավոր արդյունքը (minimum payoff) առավել բարենպաստ է մյուս տարբերակների ամենավատ արդյունքների համեմատ:

Այլ կերպ ասած՝ մարդը համեմատում է տարբեր ընտրությունների վատագույն հետևանքները և ընտրում այն տարբերակը, որտեղ այդ վատագույն հետևանքը «ամենաքիչ վատն» է:

Ռոլսի տեսության մեջ այս կանոնը կիրառվում է «սկզբնական դիրքում», որտեղ մարդիկ չգիտեն իրենց ապագա սոցիալական վիճակը, և այդ պատճառով հակված են ընտրել այնպիսի արդարության սկզբունքներ, որոնք առավել պաշտպանում են ամենավատ վիճակում հայտնվելու հնարավորությունը:

¹⁴ Տե՛ս **Bentham Jeremy** (1780): *An Introduction to the Principles of Morals and Legislation* (A New Edition, corrected by the Author, published 1823, Early Modern Texts, 2017), Chap.1, էջ 6-9, <https://www.earlymoderntexts.com/assets/pdfs/bentham1780.pdf>.

Ի տարբերություն «օգտակարության» տեսության՝ «արդարությունը որպես անաչառություն» տեսության հիմքում ընկած է այն համոզմունքը, որ հիմնական ազատությունները՝ խոսքի, խղճի, քաղաքական մասնակցության, չեն կարող զոհաբերվել ընդհանուր օգուտին: Օրինակ, եթե օգտակարության սկզբունքով թույլատրվում է սահմանափակել փոքրամասնության խոսքի ազատությունը՝ ի շահ մեծամասնության հանգստության, ապա ռոլսյան արդարության մեջ այդպիսի քաղաքականությունը անընդունելի է, քանի որ որևէ քաղաքացի, գտնվելով նախնական դիրքորոշման մեջ, չի համաձայնի նման անարդարության՝ չունենալով երաշխիք, որ ինքն այդ փոքրամասնության մեջ չի լինի: Այսպիսով, Ռոլսը փոխարինում է օգտակարության «ընդհանուր երջանկության» չափանիշը անհատի արժանապատվության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված արդարության չափանիշով¹⁵:

Այսպիսով, Ռոլսի «արդարությունը որպես անաչառություն» տեսությունը հզոր գործիք է՝ գնահատելու հանրային իշխանության գործողությունները և ձևավորելու արդար իրավական կարգեր:

Չոն Ռոլսի արդարության տեսության գործնական կիրառելիությունը և արդիականությունը

«Արդարություն» կատեգորիայի տարբեր մեկնաբանություններ կան՝ կրոնական, իրավական, տնտեսական, սոցիոլոգիական, քաղաքագիտական: Սոցիալ-քաղաքական կատեգորիայի իմաստով արդարության պահպանման երաշխավորը օրենքն է: Քաղաքական գիտակցության կառուցվածքում արդարության մասին պատկերացումները սերտորեն կապված են «պետություն», «իշխանություն» և «քաղաքական ռեժիմ» հասկացությունների հետ: Քաղաքական կարգի արդարությունը կարելի է գնահատել օրինականության իրագործման, իրավահավասարության, *պետական իշխանության վրա ազդելու և դրա իրականացումն ապահովելու հնարավորությունների տեսանկյունից*: Հակամարտությունների լուծման բռնի եղանակներից հրաժարումը, սոցիալական տարբեր խմբերի շահերի հաշվառումը, որոշումների ընդունման մեջ մասնակցելու հնարավորությունը պետք է նպաստեն քաղաքական համակարգի անվտանգությանն ու կայունությանը: Քաղաքական ոլորտում արդարությունը դիտվում է որպես պետական կարգի կարևոր բնութագիր՝ կապված իրավական պետության գաղափարի հետ: Իշխանական հարաբերությունների համակարգը արդար կամ անարդար համարելու չափանիշը տվյալ դեպքում հասարակությունում գերիշխող հասարակական գաղափարն է: Արդարության զգացումը խթանում է քաղաքացիական նախաձեռնության զարգացումը, առաջացնում է ձգտում ներգրավվելու և մասնակցելու հասունացած սոցիալական խնդիրների լուծմանը¹⁶: Օ. Հյոֆֆեի նշմամբ՝ քաղաքական արդարությունը նեղ իմաստով կարելի է հասկանալ որպես «որևէ քաղաքական ատյանի

¹⁵ Տե՛ս Rawls John, նշվ. աշխ., գլ. 3, էջ 10-15:

¹⁶ Տե՛ս Савсерис, О. А. նշվ. աշխ., էջ 14-15:

միակ գործողության՝ հրամանագրի, օրենքի, դատական որոշման գնահատում», իսկ լայն իմաստով՝ «քաղաքական ինստիտուտների արդար բնույթ, արդար իրավական պետական կառուցվածք»¹⁷:

Ջոն Ռոլսի «արդարությունը որպես անաչառություն» տեսությունը պնդում է, որ արդարության չափանիշները նախորդում են իրավական կարգին: Եթե օրենքները չեն ընդունվել *«անտեղյակության քողով»* չիմանալով, թե ով կլինենք հասարակությունում, ապա հնարավոր է՝ դրանք չեն արտացոլում արդարությունը: Այսինքն՝ օրինական լինելը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է արդարության համար: Արդյունավետ կառավարումը հաճախ բերվում է որպես արդարացում՝ հատկապես տեխնոկրատ կամ ավտորիտար համակարգերում, սակայն արդյունավետությունը, ըստ էության, գործիքային, ոչ թե նորմատիվ արժեք է: Արդյունավետ կառավարումը կարող է արագ արդյունքներ տալ, սակայն եթե այն չի հիմնվում արդար բաշխման, հանրային մասնակցության և հաշվետվողականության վրա, ապա այն վտանգում է հանրային վստահությունը և սոցիալական համախմբվածությունը: Հակառակ դեպքում կառաջանա «բարեհաճ բռնապետության» պատկեր, որն արդարություն չէ, եթե նույնիսկ թվում է, թե «գործերը լավ են ընթանում»:

Վերոնշյալ տեսական քննարկումն ավելի ընկալելի ներկայացնելու համար կարող ենք այն արտածել գործնական իրավական խնդիրների վրա, որոնք առկա են ՀՀ-ում: Իրավական համակարգում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հանրային իշխանության իրագործումն արտաքուստ իրավաչափ է, սակայն ներքին էությանը գուրկ է Ջոն Ռոլսի «արդարությունը որպես անաչառություն» տեսությամբ հիմնավորված արդարության հիմքից:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ՀՀ-ն անցում կատարեց խորհրդարանական հանրապետության կառավարման ձևին, ինչի շրջանակներում ներդրվեցին մի շարք փոփոխություններ՝ ուղղված պետության խորհրդարանական կառուցվածքի ամրապնդմանը: Այդ փոփոխություններից մեկն էլ խորհրդարանական ընտրությունների արդյունքում «կայուն մեծամասնության» պահանջն էր¹⁸, որը դիտարկվում էր որպես կայունություն ապահովող ինստիտուցիոնալ միջոց: Սակայն գործնականում այս դրույթը կարող է վերածվել մեծամասնություն կազմող ցանկացած ուժի քաղաքական չարաշահումների մեխանիզմի՝ զգալիորեն սահմանափակելով ընդդիմության դերակատարությունը: Թեև կատարվեցին որոշակի փոփոխություններ, որոնք

¹⁷ Хорхе, О. (1994) *Политика. Право. Справедливость. Основоположения критической философии права и государства*, «Гнозис», с 32

¹⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 89, մաս 3. «Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կռախիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կռախիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»:

խորհրդարանական փոքրամասնությունը կարող է օգտագործել որպես հակազդեցության գործիք, բայց դրանց կիրառելիության աստիճանն առօրյա աշխատանքում սահմանափակ է:

«Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» գիտագործնական հետազոտության մեջ հեղինակները իրավացիորեն առանձնացրել և նշել են, որ պետք է սահմանադրական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ ստեղծել՝ խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության և հակակշռող դերի ամրապնդման համար: Խորհրդարանում փոքրամասնությունը դեռևս որևէ հարցում չի կարող հանդես գալ որոշակի ինքնուրույնությամբ, ազդել քաղաքական գործընթացների իրավական հիմքերի վրա և այլն¹⁹: 2015 թվականի փոփոխություններով չեն նկատվում խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության և հակակշռող դերի ամրապնդման համար անհրաժեշտ կառուցակարգեր:

ԱՄՆ-ում գործող նախագահական համակարգը խստիվ երաշխավորում է իշխանությունների բաժանումը՝ տարանջատելով օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերը, որոնք գործում են անկախ և, միևնույն ժամանակ, իրար նկատմամբ զսպումներ և հակակշիռներ ստեղծող մեխանիզմների միջոցով: Յուրաքանչյուր ճյուղ ունի իրավասություն՝ վերահսկելու մյուսների գործունեությունը, կանխելու իշխանության կենտրոնացումը և ապահովելու հաշվետվողականություն: Օրինակ՝ Կոնգրեսը կարող է մերժել նախագահի որոշումները, նախագահը՝ վետո կիրառել օրենքների վրա, իսկ դատարանները կարող են գնահատել գործողությունների սահմանադրականությունը:

Բրիտանական խորհրդարանական համակարգում, հակառակը, գործադիր և օրենսդիր ճյուղերը հիմնականում միավորված են քաղաքական մեծամասնության շուրջը. վարչապետն ու կառավարությունը ընտրվում են Պառլամենտի մեծամասնության կողմից և կախված են նրա վստահությունից, իսկ զսպումների և հակակշիռների գործառույթները մեծապես պայմանավորված են կուսակցական կարգապահությամբ, խորհրդարանական վերահսկողությամբ, այլ ոչ թե հաստատված անկախ ինստիտուցիոնալ մեխանիզմներով: Արդյունքում, իշխանության ֆորմալ տարանջատումը կա, բայց ընդդիմության և կառավարման տարբեր ճյուղերի հնարավորությունները զսպող մեխանիզմները գործնականում թույլ են:

Հայաստանում 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո ձևավորված խորհրդարանական համակարգը ավելի շատ մոտեցել է բրիտանական մոդելին: Միացյալ Նահանգներում իշխանությունների բաժանումը իրական է և ինստիտուցիոնալացված, Միացյալ Թագավորությունում

¹⁹ Տե՛ս Դանիելյան Գ. Բ., Այվազյան Վ. Ա., Մանասյան Ա. Ա., Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանում, Գիտագործնական հետազոտություն (ԱՊՀ ՄԻՎ երևանյան մասնաճյուղ, 2015), էջ 29:

